Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3604-3607

491.99-8
9-36

R010

Ռ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

491.99-8
9-36
Ար.
425
9

ՄԵՂՐԱԳԵՏ

ՏԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

[Գրդ. Տպագրութիւն]

ԼՈՒՍԱՂԲԻՒՐ
Հրատարակչական Ընկերութիւն

ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ ԿԵԴՐ. ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴԷՆ

Թիւ 1

12073

Կ. ՊՈԼԻՍ Տպարան «Արաքս» 1913

11928



9284
39

Լուսաղբիւր Հրատարակչականը հիմնելու մեր ձեռնարկին մէջ մեզ ոգեւորող միակ նպատակն է՝ մղում տալ հրատարակութեանը կարող եւ մասնագէտ հեղինակներու դասագրքերուն, որոնց պէտքը որքան զգալի՝ նշանակութիւնը նոյնքան մեծ է մեր մատաղ սերունդին դաստիարակութեան համար:

Այն ջերմ ընդունելութիւնը որուն առարկայ եղաւ ՄԵՂՐԱԴԵՏ ներու տարրական ընթացքի Ա. եւ Բ. տարիները, ինքնին ցոյց կուտայ թէ անոնք կոչուած են նշանակելի պակաս մը լրացնելու դպրոցական դասագրքերու շարքին մէջ: Ասիկա կարեւոր յաջողութիւն մը կը նկատենք մենք՝ մեր հետապնդած նպատակին համար:

Թելադրուած վերոյիշեալ երեւոյթին, այս անգամ անա երկրորդ տպագրութեամբ լոյս կը ընծայենք ՄԵՂՐԱԴԵՏ ի տարրական Ա. եւ Բ. տարիները, ուր հեղինակը ներմուծած է շահեկան նորութիւններ եւ յաւելումներ:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ

Կ. Պոլիս 1913

Սեւեռն արեւ

ԱՄԱՌԸ ԳՆԱՑ

Ամառը գնաց, եկաւ աշունն։

Կալը կամնեցին, յարդը կրեցին մարագը. ցորենն ալ դիզեցին ամբարին մէջ։

Ջաղացքները կը դառնան հա կը դառնան, ու ալիւր կաղան։

Նախիրը կանցնի հնձուած արտերուն մէջէն, ու կը կրծէ խոզանը։

Այգիներուն խաղողները վաղուց հասունցեր են։ Սև, կարմիր ու ճերմակ ողկոյզները կերևնան կանաչ տերևներուն եռևէն. այգեկութը մօտ է։

Քանի մը շաբաթէն կը կըթենք խաղողները. այգիներն ալ կը դառնան խոպան՝ արտերուն պէս։

Օրերը, կամաց կամաց, կը կարճնան, և գիշերները կերկնանան։

Արևը ալ տաք չէ ամառուան պէս. երկինքին երեսը ամպեր կերևնան՝ կարաւան կարաւան։

Տերևները կը թափին ծառերէն ու թուփերէն. հովը կը քշէ զանոնք ու կըսէ.

— «Անցաւ Ամառը, եկաւ Աշուն, շուտով կուգայ Ձմեռն ալ...»։

Եթէ պիտի գայ, թող շուտ գայ. թող շուտ գայ՝ որ շուտ ալ երթայ։

Ձմեռն երթայ՝ որ գայ Գարուն։

1. Սեպտեմբեր քանիին է որ գիշեր ու ցերեկ հաւասար կըլլան։
2. Ա՛լ ի՞նչ բաներ կը պատահին աշնան մէջ։

ՄԱՐԴԸ Ի՞ՆՉ ՇԻՆԵՑ

Եղնիկն ըսաւ — ես արագ կը վազեմ։

Ծիծառն ըսաւ — ես կը թռչիմ հովի պէս։

Ձուկն ըսաւ — ես կը լողամ ջուրին մէջ։

Մարդը լսեց ու ըսաւ — ես շոգեկառք կը շինեմ ու եղնիկէն արագ կը վազեմ. ես օդանաւ կը շինեմ ու երկինքին մէջ կը թռչիմ. ես նաւ կը շինեմ ու ծովուն վրայէն կը ճամբորդեմ։

Եղնիկը տեսաւ շոգեկառքը — ու զարմացաւ։

Թռչունը տեսաւ օդանաւը — ու ամչցաւ։

Ձուկը տեսաւ շոգենաւը — ու խելքը գլխէն գնաց։

1. Մարդիկ ցամաքին վրայ ի՞նչ բաներով կը ճամբորդեն։
2. Մարդիկ գետի ու ծովերուն վրայէն ի՞նչ բաներով տեղէ մը տեղ կերթան։
3. Մարդիկ օդին մէջէն ի՞նչպէս կը ճամբորդեն։

ՄԱՄԱՅԻՆ ՑՈՐԵՆԸ

1

Թը՛ռ հա թը՛ռ. ճնճղուկներն եկան, իջան Մարիամ մամային ցորենին վրայ։

Մարիամ մաման խաշած ցորեն է փռեր տանիքը։

— Հէյ-էյ-էյ, հէյ-էյ-էյ, քըշա՛, քօրնակիք-ներ, քըշա՛. ցորենս հատցուցիք։

Մարիամ մաման կը բարկանայ ճնճղուկ-ներուն, ու կը քշէ՝ թևերը երերցնելով։

Ճնճղուկները կը թռին. կը թռին որ քիչ մը եռքը նորէն գան։

2

Կըռա՛, կըռա՛։

Մարիամ մաման օճառին կտորը տանիքն է մոռցեր։

— Վա՛յ, մուրը գլխուս. անծեղն եկաւ օճառս գողցաւ...

Մարիամ մաման ցուպը կը շարժէ, ու անծեղը կը թռի. կը թռի՝ օճառը կտուցին մէջ ու կը թառի դէմի բարտիին գագաթը։

3

Պէօ, պէօ. հորթը իր չուանն է քակեր, գացեր կովին ծիծերն է ծծեր։

Մարիամ մաման կը վազէ ախոռը։ Հորթը ծծեր, կաթ չէ թողուցեր իրիկուան մակարդին համար։



— Պիշօ, պիշօ, իմ ճագուկս, եկուր տեղդ. եկուր մսուրիդ առջև, կը կանչէ Մարիամ մաման հորթուկին։

Հորթուկը կը ցատկէ, կը վազէ, հոս կը թռի, հոն կը թռի։ Ահա բռնեց Մարիամ մաման, պինդ կապեց չուանը վզին ու ծայրը հանդուցեց մսուրի օղակին։

Բայց ի՞նչ օգուտ, հորթը կերեր է կաթը։

4

«Անիծուիս, ծերուիս», կըսէ Մարիամ մաման, ու տքալէն տքալէն՝ կը բարձրանայ սանդուխէն վեր։

Մարիամ մաման ծերացեր է. աչքը աղէկ չի տեսներ, ոտքը կը դողայ, ձեռքը կը դողդողայ։

Ծերացեր է ու կը տքայ։

ՀԸՄՄԱ՛ ԿԵՐԱՆՔ

Իշուս բարձած տանձ, խընձոր՝
եկայ գացի Գոմաձոր։
Վերադարձիս մէկալ օր՝
ճամբան գարկի մէկ մեծ լոր։

Ա՛հ բելիար թըռչունը.
դերի իշուս խուրջինը,
ուրախ ուրա՛խ եկայ տուն,
կընուանք ըրի իմ որդուն։

Ա՛լ տիրացու, ա՛լ տէրտէր,
սանահայր ու սանամայր,
կընքահայր ու կընքամայր,
քէհեայի կին, քոյր ու մայր,
դուռ, դրա՛կից ու խընամի,
ա՛լ ինչ թըուեմ մի ատ մի,
եօթը հարանք, եօթը մարանք,
թափանք, ատ լորը կերանք։

Կերանք, հը՛մմա, ինչպէս կերանք։

ՋՈՒՐԻՆ ԵՐԳԸ

Ես յատակ ջուրն եմ, ես գով ջուրն եմ. ի՞նչ պիտի ընէին մարդիկ, եթէ ես չըլլայի։

Առաւօտէն մինչև իրկուն, կը հոսիմ աղբիւրէն. ոչ հանգիստ ունիմ, ոչ դադար։ Կերթամ տունները՝ սափոր սափոր, կը լուսամ աղտոտ ձեռքերը, ու կաթի պէս ճերմակ կընեմ. կը լուսամ աղտոտ երեսները, ու վարդի պէս կարմիր կընեմ։

Տեսէք, սանը դրուած է կրակարանին վրայ, ու ես կեռամ անոր մէջ. կեռամ որ մայրիկը պատրաստէ նախաճաշ, ճաշ ու ընթրիք։

Ես կը հոսիմ, կերթամ դաշտերը. կը ջրեմ ծառերը, ծաղիկները, խոտերն ու բոյսերը։

Ես առուակ կըլլամ, վտակ ու գետ կըլլամ. ես ծով ու ովկէանոս կըլլամ։

Ես կը բարձրանամ օդին մէջ ու ամպ կը դառնամ. կերթամ երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ. կերթամ ու անձրև կուտամ երաշտ գետինները, ցօղ կուտամ ծարաւ բոյսերուն։

Ես եմ որ ձիւն կըլլամ, կարկուտ կըլլամ, սառոյց կըլլամ։

Ես եմ որ կենդանիներուն պապակը կանցընեմ. ես եմ որ ձեզ կը զովացնեմ, մանուկներ, երբ ամառը սաստիկ ծարաւ ղգաք։

1. Ի՞նչպէս կրնանք գիտնալ թէ ձիւնը, սառոյցը և կարկուտը ջուր են։
2. Ի՞նչու օգտակար է ջուրը. ո՞ր բաներուն օգտակար կըսենք։

ՏՈՒՆԸ Ո՞Վ ԿԸ ՇԻՆԷ

1

Մշակն եկեր, հող կը մաղէ։

Կը մաղէ սառատով, խոշոր սառատով. խիճը կառնէ մաղէն, մէկ կողմ կը նետէ ու կը դիպէ բարակ հողը։

Կը դիպէ բարակ հողը, որ վարպետը գայ՝ աղիւս կտրէ։

Դիպէ, մշակ, դիպէ բարակ հողը։

2

Վարպետն եկաւ աղիւս կը կտրէ։

Հողին հետ յարդ է խառներ. յարդ է խառներ, ջուր է լեցուցեր ու ցեխ է շիներ։

Կը դնէ փայտէ կաղապարը և թի թի ցեխ կը լեցնէ անոր մէջ։ Կը լեցնէ ու ծեփիչով կը հաւասարցնէ ցեխը՝ կաղապարին երեսին հետ։



Դուրս կը քաշէ կաղպարը և աղիւսները՝ քառակուսի ու քառանկիւն, կը շարուին մէկ մէկու քով, կը շարուին կարգով կարգով։

Կարէ, վարպետ, կարէ աղիւսը՝ որ չորնայ արևուն տակ։

3

Քարակոփը նստեր քար կը կոտրէ։

Կը կոտրէ քլունկով, կը մանրէ, կը շիտակէ ու կը բարդէ դէզ դէզ։

Կը զարնէ ծանր քլունկը, և հում, հում, ձայն կը հանէ իր կուրծքէն։ Իր կուրծքը ձայն կը հանէ և քլունկն ալ կայծ։

Կոտրէ, քարակոփ, կոտրէ խոշոր քարերը, մանրէ և բարդէ դէզ դէզ։

4

Սղոցողներն եկան, տախտակ կը սղոցեն։

Խոշոր գերանը դրեր են երկու նեցուկի վրայ. սղոցողին մէկը ելեր է անոր վերև, միւսը կեցեր է տակը։ Առեր են երկար սղոցը ու կը քաշեն գերանն ի վար, խըզը՛ր հա խըզը՛ր, խըզը՛ր հա խըզը՛ր։

Կը սղոցեն ու սղոցուկը, թեփի պէս, վար կը թափի. կը թափէ գետինը, կը թափի տակի սղոցողին գլխուն վրայ, որ ծածկուած է կարմիր թաշկինակով։

Խըզը՛ր հա խըզը՛ր, սղոցեցէք գերանը, սղոցողներ. սղոցեցէք ու շինեցէք երկար երկար տախտակներ։

5

Քարն ու աղիւսը որմնադիրին համար։

Երկար տախտակները հիւսնին համար։

Որմնադիրը իր հետ բերաւ կապարալարը, ծեփիչն ու փոքր մուրճը. հիւսնը իր հետ բերաւ ուրագը, տաշոցը ու քանոնը։

Ի՞նչ ընելու համար։

1. Քանի՞ տեսակ արհեստաւոր կաշխատի՝ շինելու համար տուն մը՝ անոր բոլոր մասերով. ըսէք մէկիկ մէկիկ և անոնց ըրածներն ալ։
2. Նայեցէք պատկերին մէջ և ըսէք ինչ որ կը տեսնէք։

ՍԿԻՒՌԸ

Սկիւռը անտառին մէջ շատ լաւ կապրէր։ Ի՞նչն էր պակաս։



Ընկոյզ ըսես՝ շատ. կաղին՝ ի՞նչքան որ կուզես. ջուր՝ կայ ու կայ, խմէ սրտիդ ուզածին չափ։

Սկիւռը կը նստէր արևկողը և կը տաքնար. օդը որ ցրտէր՝ կը մտնար ծառի ճեղքին մէջ, կը թաղուէր չոր տերևներուն տակ, կը քնանար։ Աստուծմէ ալ ի՞նչ կուզէր, տեղը համ տաք էր, համ փափուկ։

Կէնճ ու կանաչ օրերը այսպէս անցուց Սկիւռը։ Եւ եղաւ որ ծերացաւ։ Ակռաները թափեցան, աչքերուն լոյսը հատաւ։

— Մ՛խ, կըսէր ծեր սկիւռը. աշխարհքը փոխուեր է, ա՛լ առաջուանը չէ։ Արեգակը ցրտեր է, գիս չի տաքցներ։ Ընկոյզը կարծրացեր է, կրծել չըլլար. կաղինը որ ըսես, Աստուած գլխէս կտրեր է ու կտրեր։ Ի՞նչ բան է. կը պտտիմ, կը պտտիմ, պուտ մը ջուր չեմ գտնար. առուները ցամքեր են, ճահիճները չորցեր են։ Չէ, աշխարհքը փոխուեր է ու փոխուեր։

Ագռաւը լսեց ու բարտիին ծայրէն կըռակըռաց.

— Աշխարհքը հին աշխարհքն է, բայց դուն ես փոխուեր, աղա՜աղբար։

ՋԱՂԱՑ

Ջուրն է ահա
կը ֆըշֆըշայ
ու կը ֆըշայ.
Ջաղացքին մէջ
իրարանցում,
ալեկոծում։

Երեք չորս հատ
Ջրաղացքար՝
իրենց անդուլ
չախչախներով
կը պտտին,
հա՛ կը դառնան։

Դուրսը,
ներսը
իրարանցում,
սայլի ճըռինչ,
քարի գոռոց։
Մէկը բեռը
ներս կը կըրէ,
մէկն ալ ահա
դուրս կը բերէ.
մէկն աղօնը
կը լեցնէ,
ցորեն կու տայ՝
ալիւր կառնէ։

Տես, մէկ կողմն ալ
Ջաղացպանը
ալրաթաթախ՝
ալրատունը,
քարը տեղէն
իջեցուցած՝
անոր տակը
շըրջած վրան՝
տուր որ կուտայ
քարին՝ մուրճը,
եւ կը թափէ
կայծեր շուրջը.

կը տաշէ զայն,
եւ իր երգը
կերգէ ուրախ.
—«Եկուր, իմ քար,
իմ ջաղացքար,
քեզ կը ռանեմ,
խոր փոսիկներ,
սուր ատամներ
կուռ կռանով՝
ծանր մուրճով՝
շինեմ լանջիդ,
որ դուն աղաս
բընաղօնը,
բընաղօնը,
չոր աղօնը.
ալի՛ւր, ալի՛ւր
տաս աշխարհին,
եւ ծառային,
եւ արքային։
Աշխարհը լայն,
մեր տեղը նեղ,
հալինք, մաշինք
մենք միատեղ։
Եկուր, իմ քար,
քեզ կը ռանեմ,
սուր ակռաներ,
խոր փոսիկներ
կուրծքիդ հանեմ։
Ես քու տէրը,
ես քու դերին.
եկուր հաց տանք
մենք աշխարհին.
աշխարհը լայն,
մեր տեղը նեղ,
հալինք, մաշինք
մենք միատեղ։»

1. Ջաղացքին մէջ ի՞նչ բաներու աղմուկը կը լսուի։
2. Ինչո՞ւ ջաղացքարին վրայ փոսիկներ կը փորեն։
3. Ո՞վ է որ թէ՛ ծառային և թէ՛ թագաւորին հաց կու տայ, բայց ինք դարձեալ աղքատ կը մնայ։



Մանկական Աղօթք

ԻՆՉ ԸՍԱԻ, ԻՆՉ ԼՍԵՑ

— Կու-կու-լիկ-կու, կանչեց իշխան Աքլորը։

— Անցնէիր ձեռքս, փրցնէի ատ լեզուդ, — պոռաց աղա-Աղուէսը։

— Ինչպիսի թակարդիս, քաշէի ես ալ մորթիդ, — պատասխանեց մուշտակագործ վարպետը։

— Քաշէիր մորթին, շինէիր մուշտակ, որ ես հագնէի, հարսնիք երթայի, — ըսաւ քաղքին խաթունը։

1. Ա՛լ ո՞ր կենդանիներու մորթէն մուշտակ կը շինուի։
2. Ուրիշ կենդանիներու մորթէն հապա ինչե՛ր կը շինեն։

29284
39

ՄԱՅՐԻԿՍ ԱՌՈՂՋԱՑԱՀ

Սաթենիկ այսօր շատ ուրախ է, գիտէ՞ք ինչու. իր հիւանդ մայրիկը առողջացեր է։

— Գիտեմ, Մարիամ, կըսէ Սաթենիկ իր ընկերուհիին. այսօր մայրիկս իր անկողնէն ելաւ և սկսաւ աշխատիլ...

Սաթենիկ շատ շատ ուրախ է. կուզէ որ ամէնքն ալ իրեն պէս ուրախ ըլլան։

Մայրիկը, երկար օրեր, հիւանդ էր պառկեր.

ԱԽԹ. ՀԱՅԿԱՅԻ ՊՐԻՊԱՐԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈՒՇ-ՀՈՐԱ
ԱԽԹ. Ա ԱՅՍՈՒՄԱՅՈՒ Ա. ՍՈՍՈՆՈՎԻ ԱՆՎԱՆ

անոր համար, հայրիկն ալ տխուր էր, քոյրիկն ալ, պզտիկ Վահանն ալ։

Սաթենիկին մեծ քոյրը՝ Աննան, կրակ կը վառէր, կերակուր կեփէր և տանը գործերը կը տեսնէր։

Սաթենիկ ինք ալ, երբ իրկունը տուն երթար, անմիջապէս դասագրքերը վար կը դնէր, կը վազէր իր մեծ քրոջը քով։ Սենեակը կաւլէր, աղբիւրէն ջուր կը կրէր և կը կատարէր Աննային ըսածները։

Կաշխատէր որ հիւանդ մայրիկը չնեղանայ. անոր քով կերթար, դեղը կու տար, ջուր կու տար՝ որ խմէ։

Այսօր, մայրիկը առողջացեր է։ Սաթենիկ ուրախ է, որովհետև մայրիկը ըսեր էր իրեն.

— Ապրիս, շատ ապրիս, գաւակս, դուն օգնեցիր Աննային, հոգ տարիր որ հանգիստ մնամ և շուտ առողջանամ։ Ահա ես ալ առողջացայ։

1. Ձեր ալ մայրիկը երբեք հիւանդացե՞ր է։ Երբ հիւանդացեր է, ինչ էք զգացեր և ինչ վիճակ է ունեցեր ձեր տունը։ Դուք ալ ձեր մայրիկը գոհ ձգե՞ր էք։

ԳԵՂԱՑԻՆ ՈՒ ԼՈՒՄԱՅԱՓՈԽԸ

Գեղացիին մէկը առաջին անգամ էր որ քաղաք կուգար. աչքին ինկաւ լումայափոխի մը խանութը։

Ներս նայեցաւ ու տեսաւ որ խանութը պաս-պարապ է, ծախու բան չի կայ մէջը. մինակ մարդ մը նստեր է ու գիր կը գրէ։

Գեղացին ներս մտաւ ու խանութպանին հարցուց զարմանքով.

— Ի՞նչ կը ծախուի այս խանութին մէջ, աղա։

— Իշու գլուխ, ըսաւ կոպիտ խանութպանը։

— Կը տեսնեմ որ աղէկ առուտուր ունիս, պատասխանեց գեղացին. որովհետև, քու գլուխդ դատ ուրիշ ապրանք մնացած չէ խանութին մէջ։

ՓԵՍԱՑՈՒ ՄՈՒԿԸ

Մուկը ուզեց ամուսնանալ
եւ հրզօրին փեսայ դառնալ.
իրեն ըսին, որ Արեւն է
աշխարհիս մէջ միայն հրզօր։

Կերթայ կըսէ. «բարե՛, բարե՛,
«աս աշխարհքի հրզօր Արե.
«քու աղջիկդ հեզիկ-նազիկ,
«հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
«տո՛ւր որ տանեմ, ընեմ հարսիկ։»
— Ես ո՞րտեղէն հզօր եմ որ.
տես, ան Ամպն է ինծմէ հրզօր։

Մուկը կերթայ Ամպին քով. Ամպը կըսէ՝ ինծմէ հրզօր է Քամին։ Կերթայ Քամիին քով. Քամին կը խրկէ Գոմէշին. Գոմէշը կը խրկէ Գուբթանին, Գուբթանը՝ Արմատին, Արմատն ալ՝ մկան։

— Քուրիկ, քուրիկ, մեր հին ծանօթ,
ա՛յ, գուբթանը խօսքիս վրկայ,
քեզմէ հրզօր մէկը չի կայ.
քու աղջիկդ հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
տո՛ւր որ տանեմ, ընեմ հարսիկ։
— Բարո՛վ, մկնիկ, բարով տեսայ,
ըսել է որ ատպէս բան կայ.

ես քեզ զոքանչ, դուն ինձ փեսայ.
իմ աղջիկս հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
կուտամ քեզի, ըրէ հարսիկ։

Մուկը մրկան եղաւ փեսայ,
աս աշխարհքին օրէնքն է սա։

ԷՇԸ

1

Կար ու չի կար, էշ մը կար։ Շատ կաշխատէր այս էշը։

Երբ գարունը բացուէր, աղբ կը կրէր արտը. շաբաթը մէկ քանի անգամ քաղաք կը տանէր իր տէրը. քաղաքէն ալ ծանր ծանր բեռներ կը շալկէր։



Ո՜րքան կուզէր որ ախոռէն դուրս չելլէ, կենայ մսուրին առջև և անուշ անուշ ծամէ յարդ ու գարի։

Մեր իշուկը կըսէր.

— Ո՜ւֆ, ինչ անիծած եղանակ է գարուն ըսածդ։ Աղբ կրէ պարտէզը, հող կրէ, հոգիդ հանէ։ Անգամ մը ամառ գար և հանգիստ ըլլայի։

2

Եկաւ ամառ։ Ծաղիկներուն տեղ՝ բուսան բանջարեղէններ, արտերուն մէջ ալ ցորեն ու գարի։

Բայց էշը հանգիստ չունի։ Արտէն տուն կը կրէ ոսպ ու սիսեռ, յարդ ու ցորեն։ Գիւղէն քաղաք կը տանէ ձմերուկ ու սեխ, սոխ ու սխտոր։ Իր գործը շատ դժուար է, արևն ալ կրակի պէս տաք։

— Ա՜խ, գեռինն անցնիս, ամառ, կըսէ էշը. ե՞րբ աշուն պիտի գայ որ քիչ մը հանգիստ ըլլամ։

3

Ահա աշուն։ Հասունցած է խնձորը, տանձը, խաղողը, ընկոյզը, գետնախնձորը և կաղամբը։

Էշը բեռ բեռ կը կրէ պտուղ, բանջարեղէն. կը կրէ առաւօտէն մինչև իրկուն. դադար չունի, հանգիստ չունի և տքալով կը սպասէ ձմեռուան։

Ձմեռը հանգիստ եղանակ է. ոչ պտուղ կայ, ոչ բանջարեղէն, ոչ ալ հացահատիկ։ Իշուկը կը մտածէ. տաք ախոռին մէջ ոտքերս պիտի երկընցնեմ և պիտի պառկիմ հանգիստ։

4

Եկաւ հասաւ ձմեռն ալ։ Ձիւնը բռներ է լեռ ու դաշտ. սառ կապեր են ջրերն ու գետինը։ Էշը պէտք է որ փայտ ու ածուխ տանէ քաղաք։

Կը քալէ ձիւնին մէջէն, կը բարձրանայ դառիվերը և կըսէ տքալով.

— Պը՛ռէ, ինչ սաստիկ ցուրտ է, և ինչ ծանր է բեռս։ Խերն անիծած ձմեռուան ալ։

Ու էշը կը զռայ, կը զռայ։

1. Էշը ինչ կընէր գարունը, ինչ կընէր ամառը, աշունը, ձմեռը։
2. Ինչ էր իշուն գանգատը։

ՎԱ՛ՂԸ, ՎԱ՛ՂԸ

1

Առտուն, Զարուհի իր գուլպաները կը հագնէր. տեսաւ որ մէկ գուլպային կրունկը ծակեր է։ Ծակը հաղիւ գնդասեղի մը գլխուն չափ կար, բայց Զարուհի ըսաւ.

— Վնաս չունի, տակաւին խոշոր չէ, վաղը կը լեցնեմ։

Միւս օր ծակը եղաւ սիսեռի մը չափ. Զարուհի նորէն գլուխը քերեց և «վաղը թող մնայ» ըսաւ։

Վերջապէս, կարկանելու նստաւ. բայց ծակը շատ ու շատ խոշորցած էր. հիմա աւելի շատ պիտի աշխատի, աւելի ժամանակ պիտի կորսընցնէ և գուլպան ալ շատ շուտ պիտի մաշի։

Եթէ առաջին օրէն լեցնէր փոքր ծակը, այդպէ՞ս պիտի ըլլար։

2

Զարուհիին դասընկերները երբ իրկունը տուն երթան, անմիջապէս քիչ մը կը հանդչին և կը պատրաստեն իրենց վաղուան դասերը։

Զարուհի այդպէս չըներ։

— Ես վաղը կը պատրաստեմ, հիմա քիչ մը խաղամ, կըսէ։

Վաղը կըլլայ և Զարուհի իր դասերը չի գիտեր։ Ինչո՞ւ։ Որովհետև Զարուհի կըսէ.

— Վաղը կը կարեմ։

— Վաղը կը սորվիմ։

— Վաղը կը գրեմ։

3

Օր մը Զարուհի հարցուց իր մէկ ընկերուհիին.

— Ինչպէս կրնաս որ ամէն օր դասերդ լաւ կը գիտնաս։

Դասընկերուհին պատասխանեց.

— Ինչպէս կրնամ. ես երբեք «վաղը, վաղը» չեմ ըսեր։ Դուն ալ ինծի պէս ըրէ և տես։

Զարուհի որոշեց «վաղը, վաղը» չըսել. և իրաւ ալ, քիչ ատեն ետք, եղաւ դպրոցին առաջադէմ աղջիկներէն մէկը։

1. Զարուհիին գուլպայէն ծակը ինչո՞ւ մեծցաւ և ինչո՞ւ անոր գուլպան շուտ պիտի մաշի։
2. Զարուհիին ինչո՞ւ դասերը չէր գիտեր։
3. Ինչպէս հասկցաւ Զարուհին իր սխալը։

ՈԶՆԻՆ

Ոզնին գլուխը դուրս հանեց իր փուշերուն մէջէն և ըսաւ.

— «Զեմ գիտեր ինչո՞ւ ամէնքն ալ թշնամի են ինծի։

«Ես մէկու մը վնաս չեմ հասցներ։ Ես կուտեմ որդեր ու միջատներ։

«Կըսեն թէ ինչո՞ւ մարմինս ծածկուած է սուր սուր փուշերով։ Բայց չէ՞ որ ոզնին ալ հոգի մը ունի և պէտք է որ ինքզինք պաշտպանէ՝ իր թշնամիներուն դէմ։

«Տեսէք ահա, նապաստակները թեթեւոտն են. անոնք իրենց թշնամիներուն ձեռքէն կազատին՝ կրակի պէս փախչելով։

«Շունները իրենք զիրենք կը պաշտպանեն իրենց ժանիքներովը, կատուներն ալ՝ իրենց ճանկերովը։

«Զին ու ղորին ունին աքացի. խելօք ոչխարներն անգամ իրենց կոտոշներն ունին։

«Ե՞ս ինչ ունիմ։ Ես ալ ունիմ իմ փուշերս։ Երբ մէկը ուզէ վնաս տալ ինծի, անմիջապէս ներս կը քաշեմ գլուխս, ոտքերս ու պոչս, և կը դառնամ փուշէ գնդիկ մը։ Այսպէս, կազատիմ չարերուն ձեռքէն։

«Ես իմ որջս կը շինեմ խոշոր ծառերուն



կոճղին մէջ, և կը ծածկեմ մամուռով. հոն կը քնանամ ամբողջ ցորեկը։ Երբ մութը կոխէ, դուրս կելլեմ և կերթամ ուտելիք գտնելու։ Ինծի պէս կընեն բուերն ու չղջիկներն ալ։

«Զմեռն եկածին պէս՝ կը սկսիմ քնանալ։ Կը քնանամ ամիսներ. ոչ ձիւն կը տեսնեմ, ոչ փուք, ոչ ալ ցուրտ։

«Ես երկար քնանալը շատ կը սիրեմ, որովհետև խորունկ քունը առողջութիւն կու տայ ինծի։

«Հիմա, դուք ըսէք, ազնիւ մանուկներ, իրաւունք ունի՞ն մարդիկ զիս հալածելու։

«Պարտիզպանները կըսեն թէ ես իրենց պտուղները կուտեմ. հովիւները կըսեն թէ ես իրենց կաթը կը խմեմ. շուներն անգամ հակառակորդ են ինծի։

«Ի՜նչ սև ձիւն պիտի գար գլխուս, հապա եթէ փուշեր չունենայի...»

1. Ոգնին վնասակար կենդանի է. ինչո՞ւ։
2. Ի՞նչ կըսեն վնասակար չեղող կենդանիներուն և ո՞րոնք այդպէս են։
3. Ոգնին ինչո՞ւ փուշեր ունի։
4. Զմեռ ատեն ի՞նչ կընէ ոգնին։

ԱՂԲԻՒՐ

Աղբիւրս ո՞ւր է, ա՜խ ու ա՜խ,
այն ձեզի հետ պագտրւող.
աղբիւրս ո՞ւր է խորոտ-մորոտ,
անուշ ձայնով գոչգրչող։

— Այն աղբիւրդ, տապ ու տոթէն,
լեռան կըպաւ, սիրո՞ւն տըղայ,
անսիրտ լեռան քար-սիրտ կուրծքէն
հեկեկալով կը բըղխայ...։

— Հէյ ճան, ա՛յ ճան, իմ աղբիւր ճան,
բայց մեր արտը անջուր մընաց...
ակդ զըմրուխտ, տակդ մըրջան,
սիրտս պապակ՝ անջուր մընաց...։

— Մի վրշտանար, խելօք տղայ,
դարձեալ վաղը գարուն կու գայ.
գարուն կուգայ, նոր կեանք կու տայ
ու աղբիւրդ կը զրկզրայ։

1. Տղան ի՞նչ հարցուց արտին ու արօտին։
2. Արտն ու արօտը ի՞նչ պատասխանեցին։
3. Յետոյ տղան աղբիւրին ի՛նչ ըսաւ։
4. Հապա աղբի՞ւրը ի՛նչ պատասխանեց։
5. Աղբիւրները ե՞րբ կը չորնան և ե՞րբ կը շատնան։

ԼՍԷ՛, ՊԶՏԻԿ ԱՂՋԻԿ

Լսէ, պզտիկ աղջիկ.
տես ասեղը ինչ կըսէ։
Ասեղը կըսէ.
— «Ես քեզի բարեկամ պիտի ըլլամ և այ ասկէ ետք իրարմէ պիտի չի՞զատուինք։
«Ես ու դուն մէկտեղ պիտի աշխատինք։
«Բայց, գիտե՞ս թէ ինչպէս ասեղ եղայ ես։
«Հազար հազար մարդիկ փորեցին գետինը, շինեցին խորունկ հորեր և գտան երկաթը։

«Այդ երկաթը կոշտ ու կոպիտ բան էր. հանեցին դուրս, հալեցին, մաքրեցին և անկէ ձուլեցին զիս։
«Տես, ինչ՞ որքան փայլուն, նուրբ ու թեթև եմ ես։
«Գիտե՞ս թէ ինչպէս շիներ են կտաւն ալ, այն կտաւը՝ որուն մէջ կը շուլլես զիս ու կար կը կարես։
«Դարձեալ, հազարաւոր մարդիկ, տաք արևին տակ, շաբաթներ քրտինք են թափեր, ցաներ ու քաղեր են բամպակը, յետոյ բամպակէն մանած են մաներ և այդ մանածէն ալ կտաւ են գործեր։
«Այդպէս շինուած է այն թելն ալ՝ որ իմ ծակէս կանցնես և կը կարես քու կտորդ։»

1. Ի՞նչ բանէ շինուած է ասեղը։
2. Երկաթը ո՞ւրկէ կը հանեն և ինչպէս անով առարկաներ կը շինեն։
3. Ալ ուրիշ ի՞նչ առարկաներ երկաթէ շինուած են։
4. Պատմեցէք թէ կտաւը ո՛ւրկէ շինուած է և ինչպէս։

ՄԵՐ ՍԵՒ ԿԱՏՈՒՆ

Թաղին մէջ, ամէնքը կը ճանչնային մեր սև կատուն։

Կատուներ շատ կային մեր թաղը, բայց մեր Սևուկը մէկ հատիկ էր։ Սեփ-սև, աչքերը դեղին, մազը թաւիշ ու պապղուն, ինքը սիրուն ու գէր... կը մլաւէր բարակ ու ցած ձայնով։

— Մարիամ, հաց բեր, Սևուկը անօթի է, — կըսէր հայրս։

Սփռոցը կը բացուէր ու կը նստէինք սեղանի. Սևուկը կը ցատկէր հօրս ուսին ու յետոյ կը նստէր անոր ծնկան վրայ։

— Ուտենք, կատու, Աստծու տուածը,— կըսէր հայրս։

1. Դուք ալ կատու ունի՞ք. ի՞նչ գոյն ունի, նկարագրեցէք։ Դո՞ւք ի՛նչպէս կը կերակրէք ձեր կատուն։

ՁԻՆ ՈՒ ՔՈՒՌԱԿԸ

1

Այսօր դասի ժամանակ, վարժապետը նոր կանոն մը կը սորվեցնէր Թուաբանութենէն։

Ընկերս, Ստեփանիկը, ականջիս փըսփսաց.

— Ես լաւ ձի նկարել գիտեմ։

Անհամբեր կը սպասէի դասամիջոցին. ալ չիմացայ թէ ինչ պատմեց վարժապետը։

Դասը վերջացաւ։ Ստեփանիկ նկարեց քարեսախտակիս վրայ այսպիսի ձի մը.

Այնչափ հաւնեցայ, որ սիրտս սկսաւ բաբախել։ Ես ալ ուզեցի ձի նկարել։

Դասարանէն դուրս չի գացի. այնքան աշխատեցայ, այնքան աշխատեցայ, որ նկարեցի ոչ միայն ձի, այլ քուռակն ալ հետը։

2

Զանգակը հնչեց. աշակերտները ներս եկան և նստեցան։

Վարժապետն ալ եկաւ և քանոնը սեղանին զարնելով պոռաց.

— Լռութիւն։

Բոլորն ալ սուս կեցան։

Յետոյ, վարժապետը դարձաւ ինծի և ըսաւ որ ոտքի կենամ։

— Կրկնէ տեսնեմ, ինչ որ պատմեցի, կէս ժամ առաջ։

Ի՞նչ կրնայի կրկնել։ Մունջի պէս կանգնած՝ գլուխս կը քերէի։

Վարժապետը զրկեց զիս ճաշէ։ Զանգակը հնչեց և ընկերներս, կարգով, դուրս ելան, գացին կերակուր ուտելու։ Մնացի մինակ։

Տեսնելը իր կայ մէջը

ԾՈՒՌ-ԴԴՈՒՄԸ

1

Ինչ փչեց, ինչ չի փչեց Ծուռ-Դդմին խել-քին, եկաւ, գաւազանը առաւ՝ ծուռ մէջքին դրաւ ու ճամ-բայ ինկաւ. երթամ՝ ընկոյզ գողնալու ըսաւ։

Շատ գնաց թէ քիչ, մի-նակ ինքը Ծուռ-Դդումը գիտէ. միայն թէ, ճամբան դէմն եկաւ Մողին։

Մողին հարցուց.

— Ո՞ւր կերթաս, Ծուռ-Դդո՛ւմ։

— Ծռիս, ճամբուն տակն ընկնիս. բերանդ կը չորնայ որ քեռի ու կնքահայր ըսես,— պա-տասխանեց Դդումը բար-կացած։

— Աղա՛ քեռի, ատ ո՞ւր կերթաս, նորէն հարցուց Մողին։

— Ընկոյզ-գո՛ղ, պատասխանեց Դդումը։

— Է՛ որ այդպէս է, մէկ չորրանք՝ երկուք ըլլանք, ըսաւ Մողին։

Ծուռ-Դդումը հաւանեցաւ, ու միասին շա-րունակեցին ճամբան։

2

Շատ գացին թէ քիչ, մինակ Դդումն ու Մոզին գիտեն. միայն թէ ճամբան հանդիպեցան Աքլորին։

— Ո՞ւր կերթաս, Ծուռ-Դդում,— հարցուց Աքլորը։

— Ծռիս, ճամբուն տակն ընկնիս, բարկացաւ Դդումը. բերանդ կը չորնայ որ քեռի ու կնքահայր ըսես։

— Կնքահայր, աստ ո՞ւր կերթաս, կրկնեց Աքլորը։

— Ընկրզ-գող, պատասխանեց Դդումը։

— Է՛, երկուք չըլլանք, երեք ըլլանք, ըսաւ Աքլորը։

Դդումն ու Մոզին հաւանեցան, և երեքով շարունակեցին ճամբան։

3

Շատ գացին թէ քիչ, աստ ալ Դդումը, Մոզին ու Աքլորը գիտեն. միայն թէ ճամբան պատահեցան Հերիւնին։

— Ծուռ-Դդում, աստ ո՞ւր կերթաս հարցուց Հերիւնը։

— Ծռիս, ճամբուն տակն ընկնիս, բարկացաւ Դդումը. բերանդ կը չորնայ որ քեռի ու կնքահայր ըսես։

— Քեռի, կնքահայր աղա, ո՞ւր կերթաս, հարցուց Հերիւնը։

— Ընկրզ-գող, պատասխանեց Դդումը։

— Է՛, երեք չըլլանք, չորս ըլլանք, ըսաւ Հերիւնը։

Դդումը, Մոզին ու Աքլորը հաւանեցան, ու չորս ընկեր շարունակեցին ճամբան։

4

Հասան պառաւի մը տունը։

Դդումը հանեց Մոզին տանիքը, թաղեց Աքլորը օճախի մոխիրին մէջ, ցցեց Հերիւնն ալ գետինը։ Գնաց որ վերցնէ ընկոյզին տոպրակը. ընկոյզն է շրխբրտաց։

Պառաւը որ լսեց, տեղէն վեր թռաւ և ուզեց ընկոյզին քով երթալ,— Հերիւնը ոտքը մտաւ։ Գնաց որ կրակին անթեղը հանէ ու ճրագ վառէ,— Աքլորը թևերը թափահարեց և մոխիրը անոր աչքերը լեցուց։ Ուզեց որ վեր նայի և աչքերը շփէ,— Մոզին անոր բերանը հող թափեց. այդ միջոցին, Դդումը շալկեց ընկոյզին տոպրակը, ու փախաւ։

5

Պառաւը վերցուց Հերիւնը՝ կօշիկները կարկըտնելու. մորթեց Աքլորը, կերաւ. բռնեց Մոզին ալ, բերաւ՝ իր գոմը կապեց։

Իսկ Դդումը տեսաւ որ պառաւը ինկեր է

ետին, մօտեցեր է, հա՜ կը հասնի. ծռաւ, ինկաւ բարձր ցանկապատին վրայ՝ որ պառաւին ձեռքը չանցնի. ատպէս ալ ծռած մնաց։

ԱՆՄԵՂՆԵՐՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ

1

Ժամանակին թագաւոր մը կար։

Այս թագաւորը կեռաս շատ կը սիրէր։ Գիտէք թէ ճնճղուկներն ալ շատ կը սիրեն կեռասը։

Անոր համար, թագաւորը կը վախնար թէ ճընճղուկները կուտեն ծառերուն կեռասը և իրեն բան չեն ձգեր։

Օր մը, թագաւորը սաստիկ բարկացաւ ճնճղուկներուն դէմ, և հրաման հանեց որ՝ իր հպատակները սպաննեն բոլոր ճնճղուկները ու մէկ հատ ողջ չթողուն։

Թագաւորը ըսաւ.

— Ով որ շատ թռչուն սպաննէ, ով որ շատ թռչունի բոյն քանդէ, անոր մեծ պարգևներ պիտի տամ։

2

Թագաւորի հրաման էր, կատարուեցաւ։

Հպատակները սպաննեցին ճնճղուկները և բոլոր թռչունները. աւրեցին անոնց բոյները, կոտրեցին հաւկիթները. մէկ հատ ողջ թռչուն չի մնաց։

Ամբողջ երկրին մէջ տիրեց ամայութիւն. երկինքէն ոչ թև կանցնէր, ոչ ալ ճռւողիւն կը լսուէր։

Սակայն, գիտէ՞ք ինչ պատահեցաւ։

Միւս տարին, վնասակար միջատները այնքան շատցան, այնքան շատցան, որ պարտէզներուն մէջ պտուղ մը անգամ չի մնաց։ Թագաւորը իր սեղանին վրայ չի կրցաւ մէկ հատիկ կեռաս մը անգամ գտնել՝ ազանդերի համար։

3

Թագաւորը սաստիկ զղջաց իր ըրածին վրայ. և որովհետև կեռաս շատ կը սիրէր, մարդ խրկեց ուրիշ երկիրներ, որ ճնճղուկ գտնեն և բերեն իր թագաւորութեանը մէջ։

1. Թագաւորը ինչո՞ւ սպաննել տուաւ թռչունները։
2. Յետոյ ինչո՞ւ զղջաց։
3. Թագաւորը ի՞նչպէս կրեց իր յանցանքին պատիժը։

Ա Ղ Ը

Ձեր մայրիկը ամէն օր որ կերակուր պատրաստէ, անպատճառ անոր մէջ աղ կը ձգէ։

Հացի սեղանին վրայ դուք միշտ կը տեսնէք աղամանը. անոր մէջ լեցուած է ճերմակ շաքարի պէս՝ հատիկ հատիկ աղը։

Բայց, հարցուցած էք թէ ինչ է աղը, և ինչու մարդիկ այնքան աղ կը գործածեն։

Աղը կը գտնուի այն տեսակ հողերու մէջ, որոնք շատ հին ատենները ծովի կամ լիճի ջուրով ծածկուած են եղեր։

Աղը կը գտնուի նաև ծովի ջուրերուն և կարգ մը աղի լիճերու մէջ։

Մեր գործածած աղը, ուրեմն, կամ աղահանքերէն կելլէ, կամ աղի լիճերէն։

Աղահանքերէն կը հանեն՝ խոշոր խոշոր կտորներով. ապա կը փշրեն ու կը մանրցնեն։

Իսկ աղի լիճերէն ջուրը առնելով, կը կրեն մեծ աւազաններու մէջ և կը թողուն արևին տակ. արևին տաքութենէն ջուրը կը շոգիանայ և տակը կը մնայ աղը։

Յետոյ մարդիկ կը բերեն շուկան և կը ծախեն։

Աղը թէ մարդոց և թէ կենդանիներուն առողջութեան համար անհրաժեշտ բան է։ Երբ որ աղ չըլլար, մենք շատ հիւանդութիւններ պիտի ունենայինք։

Կենդանիներն անգամ աղ կը փնտռեն. կերթան լեռներու մէջ, աղի քար կը գտնեն և կը լզեն։

Աղը աւելի շուտով կը հալի պաղ ջուրին՝ քան թէ տաք ջուրին մէջ։

Հապա շաքարը. ըսէք տեսնեմ, տաք թէ պաղ ջուրին մէջ շուտ կը հալի։

1. Ինչո՞ւ մարդիկ աղ կը գործածեն։
2. Աղը միայն մարդո՞ց համար պէտք է։
3. Ի՞նչ ըսել է անհրաժեշտ բան։
4. Ուրիշ ի՞նչ բաներ գիտէք որ նոյնպէս անհրաժեշտ են։

ԹՈՒԹԱԿԸ



1. Թութակը լուռ կը մրտմրտար,
Քեռին պառկած կը խրոմբար.
յանկարծ եկաւ չար մէկ փիսիկ
ու նայեցաւ սուսիկ-փուսիկ։



2. Տեղէն թռաւ թութակն ահէն,
«փրրկէ, քեռի, գիս այս մահէն։»
Բայց Քեռին է կը խրոմփայ
ու չար կատուն կը բարձրանայ։



3. Թութակն այսպէս թրուչտեղով,
կատուին շուրջը պրտտեղով
թակարդ յարեց իր ոտքին,
եւ դայն թոկով սեղմեց ձողին։



4. Կատուն միա՜ւ, միա՜ւ կուլայ.
լէհլէթ քեզի, չար սատանայ,
Քեռին աչքը ժիր կը բանայ.
կատուն թակարդն ինկած ահա...։

5. Քեռին բռնեց կատուին պոչէն,
տուր որ կու տաս ձախ ու աջէն,
անոր հոգուն բիր մը քաշեց
որ հաւնեցաւ ով որ լսեց։

6. Յետոյ դարձաւ, եկաւ Քեռին,
այսպէս ըսաւ մեր Թուխակին.
«ապրիս, Թուխակ, որ միշտ այդպէս
«դուն քու խելքով քեզ ազատես։»

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵՆԴԱՆԻՆ

1

Շաւարշ շուկայէն տուն կու գար. տեսաւ որ իր ընկերները խումբով կը վազեն դէպի միւս փողոցը։

— Ինչ կայ, ինչ կայ, հարցուց Շաւարշ։

— Կապիկը, կապիկը, պոռաց մէկ ընկերը և վազեց փողոցէն վար։

Շաւարշ ինք ալ սկսաւ վազել՝ իր ընկերներուն գացած կողմը։

2

Ինչ տեսնէ ազէկ։ Տեսաւ կենդանի մը. այդ կենդանիին վիզէն ալ շղթայ մը կախուած և շղթային ծայրէն ալ մարդ մը բռնած։

Մարդը տափ մը ունի ձեռքը, որ կը զարնէ։

Կենդանին մարդու պէս դէմք ունի, մարդու պէս ձեռքեր ու ոտքեր ունի. սկսաւ ահա տեսակ տեսակ խաղեր ընել, ցատկել, պարել և պառաւի պէս քաշել։

Շաւարշ երբ կը նայէր կենդանիին չարաճճի աչքերուն, կը զարմանար և խնդուկը չէր կրնար բռնել։

Իր ընկերները պտուղ կը նետէին անոր ու կը պոռային.

—Կապիկ, ահա քեզի կեռաս. կեր տեսնենք։

Ու կապիկը կուտէր պտուղը, և մարդու պէս, կուտը բերնէն հանելով՝ կը նետէր մանուկներուն։

3

Միւս օր, երբ Շաւարշ ու իր ընկերները դպրոց գացին, իրենց ուսուցչին հարցումներ երին՝ կապիկին վրայ։

Ուսուցիչը ըսաւ թէ, մարդէն եաք, ամէնէն խելացի կենդանին կապիկն է։ Յայտնեց թէ մէկ քանի տեսակ կապիկներ կան, ինչպէս, օրանկօթանկ, շիմբազի, եայլն։

Մանուկները չէին ուզեր որ ուսուցիչը ընդհատէ դասը. կը փափաքէին որ միշտ նոր ու նոր բաներ ըսէ իրենց։ Ուսուցիչը խոստացաւ, գալ դասին, շատ հետաքրքիր պատմութիւն մը ընել՝ կապիկին վրայ։

1. Ինչո՞ւ կապիկը մարդու կը նմանի։
2. Ինչէ՞ն գիտէք թէ խելացի կենդանի է կապիկը։

ԿԱՊԻԿԻՆ ԱՐՁԱՆԸ

1

Տղա՛ք, երէկ ձեզի խոստացայ որ կապիկին վրայ պատմութիւն մը պատմեմ, մտիկ կընէ՞ք։

— Այո՛, այո՛, պոռացին ամէնքն ալ։

Մանուկները լուռ կեցան և ուշադիր կը սպասէին։

2

Ուսուցիչը այսպէս պատմեց.

— Ֆրանսայի քաղաքներէն մէկուն մէջ, արձան մը կայ շինուած. այդ արձանը՝ Շարիման անունով շիմբազի կապիկի մը արձանն է։ Լսեցէք թէ ինչո՞ւ համար այս մեծ պատիւին արժանացաւ Շարիման։

«Ճամբորդին մէկը, Ափրիկէէն դարձած ատեն, Շարիմանը իր հետ այդ քաղաքը բերած էր։ Կապիկը ազատ-համարձակ կը պտտէր քաղաքին փողոցները, և ամէն տեղ ալ կը մտնէր ու կելլէր։

«Օր մը, կապիկը տեսաւ որ՝ փոքրիկ մանուկ մը, ջրհորին քով խաղցած ատեն, յանկարծ գլորեցաւ, ինկաւ անոր մէջ։ Կապիկը, ակնթարթի մը մէջ, բռնեց դոյլին չուանը, ջրհորէն վար սահեցաւ, գրկեց խեղդուելու վրայ եղող մանուկը, և վեր բարձրացաւ։

«Քաղաքացիները, ասոր համար, շատ սիրեցին այդ կապիկը։

«Շարիման կը մտնէր ամէն տուն, կը մտնէր ամէն խանութ և իր ու

Երթիկ բանամ դէմ հով քամուն,
Թոնիր թաղեմ մէջ այրերուն,
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն.
Մեր ցաւ կու տանք հարաւ քամուն։»

Գընաց աշուն, եկաւ գարուն.
Կաթէր ջրիկ աղբիւրներուն,
Կերթար լցուէր բարակ առուն.
Ծըլաւ շուշան մեր սարերուն,
Փունջ մանուշակ մէջ ձորերուն,
Կու գայ ձայնիկ նոր գառներուն։

1. Տատրակը ինչո՞ւ տխուր էր։
2. Ո՞վ մխիթարեց զայն և ի՞նչ ըսաւ անոր։
3. Ինչու ճայեկն ալ չէր վախնար ձմեռէն։

ԿՈՐՍՈՒԱԾ ՁՄԵԼԻՆ

1

Գարեգին դպրոցի բակին մէջ ձմելի մը գըտաւ։ Ճերմակ փղոսկրէ կոթով, սիրուն, շատ սիրուն ձմելի մը։

Գարեգին կը բանայ փայլուն շեղբը. կը գոցէ, նորէն կը բանայ ու կը նայի վրան։

Շատոնց է որ կը փափաքէր ձմելի մը ունենալ։ Իր բոլոր ընկերներն ալ ունէին սէկ մէկ

հատ, մինակ ինք չունի. ամէն անգամ որ մատիտին ծայրը հանէ՝ իր ընկերոջ ձմելին կուզէ։

«Ինչպէս բանեցաւ բաղդս», կըսէ Գարեգին, ու ձմելին կը դնէ գրպանը, տուն կերթայ։

2

Իրկունը, Գարեգին կը նստի դասերը սորվելու. բայց, ատեն ատեն, դուրս կելլէ, գրպանէն կը հանէ ձմելին, և գաղտուկ գաղտուկ անոր վրայ կը նայի։

Կը վախնայ որ մարդ չտեսնէ. ինքզինք յանցաւոր կը զգայ։

Յանցաւո՞ր։ Ինչո՞ւ համար։

Անոր համար որ, Գարեգին գիտէ թէ՝ այդ ձմելին անշուշտ դպրոցի տղոցմէ մէկը կորսընցուցեր է. գիտէ թէ՝ հիմա անոր տէրը տրտում տխուր է։

3

Գարեգին, յանկարծ, գրպանէն կը հանէ ձմելին ու մայրիկին կը ցուցնէ.

— Տես, մայրիկ, ինչ աղուոր ձմելի մը գտայ այսօր. իր տիրոջը տամ, այնպէս չէ՞։

— Անշուշտ, անշուշտ, զաւակս, կըսէ մայ-

ըիկը։ Վաղը առաւու, կը տանես, քու ուսուցչիդ կու տաս, որ ան ալ տէրը գտնէ ու անոր յանձնէ։ Տեսնաս ինչպէս պիտի խնդայ կորսնցնողը՝ երբ իր կորուստը գտնէ։

Միւս օր, առաւուն, Գարեգին կը տանէ զմելին և կը յանձնէ ուսուցչին։

— Շատ լաւ, տղաս, կըսէ ուսուցիչը. հարցնենք, տեսնենք որուն է։

1. Գարեգին ինչո՞ւ գաղտուկ գաղտուկ կը նայէր զմելին վրայ և ինչո՞ւ յանցաւոր կը զգար ինքզինք։
2. Մայրիկը երեն ինչ պատուիրած էր։
3. Գարեգին վա՞ւ բան ըրած էր որ զմելին շուտով իր մայրիկին ցոյց չէր տուեր։

ՀՐԱՇԱԼԻ ՀԱՏԻԿԸ

1

Կըլլայ չըլլար, այրի կին մը. կունենայ մէկ հատիկ տղայ մը, անունը Վահագ։

Օրուան մէկը, մայրը կըսէ.

— Գնա, ամբարէն ալիւր բեր, հաց եփեմ։

Վահագ կերթայ, կը քերէ ամբարին տակը և կը բերէ եղած ալիւրը։ Դռան առջև, դէմը կելլէ հիւսիսային քամին, կը ցրուէ ալիւրը, կը ցանէ չորս դին։

Վահագ շատ կը բարկանայ քամիին դէմ. կուգայ մօրը կը պատմէ անոր ըրածը։

— Մայրիկ, կըսէ, ճնա՜ս բարով. ես կերթամ քամիէն ալիւրս ուզելու։

Կըսէ ու կերթայ։

2

Կերթայ, կերթայ, կը հասնի քամիին ցուրտ-ցուրտ պալատը։

Քամին պաղ-պաղ կը հարցնէ.

— Ինչ կուզես ինծմէ, էյ տղայ։

— Ինչպէս թէ ինչ կուզեմ, եկեր եմ ալիւրս ուզելու։ Դուն ցրուեցիր մեր ալիւրը, անօթի թողուցիր մայր ու տղայ. ետ տուր ալիւրս. մինչև չտաս, այս տեղէն չեմ շարժիր։

Քամին կը մտածէ, կը մտածէ, կը դառնայ՝ կըսէ տղուն.

— Ես ալիւր չունիմ որ ձեզի տամ. բայց ալիւրի տեղ՝ ուրիշ բան մը կու տամ։ Կու տամ քեզի հրաշալի, աննման հատիկ մը։ Տար, ցանէ և միշտ հաց կունենաս։

3

Տղան վերցուց հատիկը, եկաւ տուն, ցանեց իրենց բակը։ Օր մըն ալ, տեսաւ՝ որ բակը կանաչ արտ է դարձեր։ Բուսեր են ցօղուններ, ամէն մէկ ցօղունի վրայ հարիւր հասկ, հասկերը լեցուն հատիկներով։

Վահագ հաւաքեց հունձքը, ալիւր շինեց, մայրն ալ հաց եփեց. կերան, կշտացան մայր ու տղայ։

Միւս տարին, Վահագ մեծ արտ մը վարեց, ցանեց. դարձեալ առատ հունձք առաւ։

Հարստացաւ Վահագ։ Մայր ու տղայ աղուոր տուն մը շինեցին, և հանգիստ, հանգիստ կապրէին։

4

Օր մը որ Վահագ իր կալը կը հանէր, աղքատ այրի կին մը եկաւ, և ափ մը ցորեն ուզեց։

— Որբերս անօթի են, քիչ մը ցորեն տուր, տանեմ, ալիւր աղամ և կշտացնեմ անոնց փորը։

Վահագ վռնտեց այրին։

Այդ առեն, վրայ հասաւ հիւսիսային քամին. փչեց, ցրուեց ցորենի դէզերը, և պոռաց Վահագին ականջին.

—Անպիտան տղայ, ես քեզի այսքան բարիք տուի որ՝ մինաւոր ուտես. դուն հարստացար և ուրիշներուն չես օգներ։ Ա՛լ ցորենի երես չես տեսներ. ինչ որ ցանես՝ պիտի փճացնեմ։

Վահագին շունը լացաւ ու ըսաւ.

— Քամի, քամի, գոնէ ինծի խղճա. հապա ե՞ս ինչ ընեմ, ե՞ս ինչ ուտեմ...։

— Լա՛ւ, որ այդպէս է, ըսաւ քամին, քու բաժինդ կը թողում. դուն ալ քու բաժինէդ մաս հանէ քու տիրոջդ։

Այն օրէն ասդին, ցօղունին վրայ մէկ հասկ բուսաւ. և Վահագ այդ հասկն ալ անվնաս չէր

բերեր տուն։ Շատ անգամ, քամին կը փչէր՝ գետնին կը կպցնէր ցորենը. շատ անգամ, ցանուածին կէսն ալ չէր անցներ Վահագին ձեռքը։

1. Ցորենը ցանելէ առաջ, նախ ի՞նչ պէտք է ընել արտը։
2. Ցորենը ցանեցինք. մինչև որ հաց շինենք, ի՞նչեր պէտք է ընենք. պատմեցէք։

ՁԻՆ

1

Անգամ մը, կռուի մէջ, արաբ ցեղապետ մը գերի բռնուեցաւ։

Ցեղապետը վերք էր առեր թեւէն. թշնամիները կապեր էին զինք ուղտի մը վրայ, և կը տանէին իրենց հետ։

Գերի բռնած էին նաև ցեղապետին ձին, որ աղնիւ նժոյգ մըն էր։

Գիշերը, պառկեցան ամէնքը անապատին մէջ։

Գերիներուն և ցեղապետին ալ ոտքերը կապած էին կաշիէ փոկերով, որ չըլլայ թէ փախչին։

2

Ցեղապետին քունը չէր գար. սաստիկ կը ցաւէին իր վէրքերը։

Յանկարծ, խաւարին մէջէն լսեց նժոյգի մը խրխնջիւնը։

Ցեղապետը ճանչցաւ իր ձիուն ձայնը. «Երթամ, անգամ մըն ալ տեսնեմ իմ սիրելի կենդանիս», ըսաւ։

Երեսի վրայ քսուելով, սողալէն-սողալէն՝ գնաց մինչև իր նժոյգին քով։

Մօտեցաւ անոր և ըսաւ.

— Իմ ազնիւ երիվարս, դուն ալ ինծի պէս բանտարկեալ պիտի ըլլաս։ Քեզ ալ գերի կը տանեն ահա։ Ա՛լ ով քեզի ուղտի կաթ պիտի խմցնէ, ա՛լ ով քեզի ափով գարի պիտի կերցնէ։ Անապատին մէջ չպիտի սուրաս հովին պէս, և

պիտի ըլլաս ինծի նման թշուառ։ Բայց, ո՛չ. եթէ ես գերի եմ, դունէ դուն ազատ եղիր. թռիր, վերադարձիր իմ վրաններս, գնա, կանգ առ ամենց առջև, գլուխդ ներս երկնցուր և լգէ իմ փոքր զաւակներուս ձեռքերը...։

3

Ցեղապետը ակռաներով քակեց նժոյգին պարանէ ոտնակապերը։

Կենդանին ազատ եղաւ. բայց, տեսաւ որ իր տէրը վիրաւորուած է և անոր ոտքերը շղթա-[illegible] են։ Գլուխը ծռեց, հոտոտեց իր տէրը, [illegible] կաշիէ գօտիէն՝ սկսաւ քա-[illegible] և խածնելով անոր [illegible] ամրակ պրպտելու։

Հասաւ տիրոջը վրանները. վար դրաւ իր տէրը՝ աւազներուն վրայ, անոր կնկանն ու զաւակներուն առջև. բայց, ինք ալ, անմիջապէս, [illegible] գետին ու անշնչացաւ՝ յոգնութենէն։

Մե[illegible] կենդանին, բայց մարդիկ [illegible] թուքնը աւանդեցին [illegible] լացին իր վրայ, և իր պատ[illegible] բերնէ բերան։

1. Արաբները ո՞ւր կը բնակին և ինչ տեսակ ժողովուրդ են։
2. Ինչ ըրաւ ցեղապետը երբ իր ձիուն խրխնջիւնը լսեց։
3. Ձին ինչպէս հասկցաւ թէ իր տէրը գերի է բռնուած։
4. Ինչպէս ազատեց իր տէրը և ինք ինչ եղաւ։
5. Ձին կը խրխնջայ, հապա էշը, կովը, այծը, շունը, կատուն...

ՄԿԱՆ ՄԱՀԸ

1

Ճնճուղն ու մուկը աղբար եղան։ Գետին ափը բոյն շինեցին, մտան մէջը։

Օր մը ճնճուղը գնաց հողը փնտռելու, ետ եկաւ, տեսաւ որ Մուկը մեռեր է։ Ծնկանը զարկաւ.

— Վա՛յ, աղբա՛ր, վա՛յ...

Եօթը ճամբուն մէջտեղ նստեցաւ, հողը փորեց, գլխուն թափեց.

— Վա՛յ, աղբա՛ր, վա՛յ։

Զայնին վրայ Լորիկն եկաւ.

— Էյ իմ ճնճուղ նախշուն փետուր,
հողը ինչո՞ւ գլխուդ կու տաս։
— Թրո՛ւ, թրո՛ւ, ճնճուղն ըսաւ,
ես որ չի տամ, ո՞վ տայ հապա.
մրկան նրման աղբար մեռաւ,
աշխարհքն այսպէս անտէր մընաց.
ես որ հողը տամ իմ գլխուս
մեծ բան է...։

— «Ափսո՛ս, ափսո՛ս, ըսաւ լորը,
«մրկան նրման մարդը մեռաւ։»
Ըսաւ, իրեն այնքան զարկաւ
որ կոտրեցաւ մէկ թևիկը
ու վար ինկաւ։

2

Ծառը ըսաւ.

— Լորիկ քուրիկ, ճրտճրտուրիկ,
ինչո՞ւ ես մէկ թևդ կոտրեր։
— Ինչպէ՞ս հապա ես չը կոտրեմ.
մրկան նրման մարդը մեռաւ,
աշխարհքն այսպէս անտէր մընաց։
Ճընճուղը հող կուտայ գլխուն,
ես որ իմ մէկ թևս կոտրեմ՝
մեծ բան է...։

— «Ախ-վա՛խ, ախ-վա՛խ, պոռաց ծառը.
մրկան նրման մարդը՞ մեռնի...։»
Գընաց եկաւ, գընաց եկաւ,
իր ճիւղերը զարկաւ իրար,
Չարդեց, մընաց ճրղակոտոր։

3

Քարերն ըսին։

— Ծառիկ-մառիկ, կանանչ թառիկ,
ճիւղերդ ի՞նչու վար թափեցիր։
— «Վա՛յ, ձեր տունը Աստուած շինէ,
մրկան նրման մարդը մեռաւ,
աշխարհքն այսպէս անտէր մընաց.
ճընճուղն այն տեղ հողը գլխուն,
լորը իրեն թևը կոտրած,
ես որ թափեմ իմ ճիւղերս՝
մեծ բան է...

—«Հազար ափսոս, քարերն ըսին,
մըկան նման մարդը մեռաւ.»
ու գոռալէն, գոռգրռալէն՝
գլորուեցան լեռներն ի վար
ու թափուեցան ջրերուն մէջ։

4

Ջրերն ըսին.
— Ի՞նչ է եղեր, էյ խենդ քարեր,
չէ՞ որ ձեր տեղն անշարժ էիք,
ինչո՞ւ այդպէս վար կը թափիք։
—Ա՛լ ի՞նչ անշարժ, չէք ըսեր որ—
մըկան նման մարդը մեռաւ,
աշխարհքն այսպէս անտէր մնաց.
ճընճուղն այն տեղը հողը գլխուն,
լորը իրեն թեւը կոտրած,
ծառը մընաց ճրղակոտոր,
մենք մեր տեղէն որ գլորուինք
մեծ բան է...
—«Հէյ-վա՜խ, հէյ-վա՜խ, ի՞նչ իմացանք,
մըկան նման մարդն ալ մեռնի...»
Ջրերն ըսին, խառնուեցան,
ու վազեցին պըղտոր-մըղտոր։

5

Ան կողմերէն տըքտըքալով
Պառաւն եկաւ։ Ան որ տեսաւ.
—Էյ գլգլան ջրեր, ըսաւ,

դուք պարզ էիք ու միշտ զուլալ,
ինչո՞ւ այսօր պըղտորեցաք։
— Վա՜յ քու տունդ փըլի, պառա՜ւ,
դուն չե՞ս լսեր՝ ինչ է եղեր.
մըկան նման մարդը մեռաւ,
աշխարհքն այսպէս անտէր մընաց.
ճընճուղն այն տեղը հողը գլխուն,
լորը իրեն թեւը կոտրած,
ծառը եղած ճրղակոտոր,
քարերը վար գլոր-մըլոր,
որ մենք այսպէս դառնանք պըղտոր՝
մեծ բան է...

—«Հողն իմ գըլխո՞ւս, պառաւն ըսաւ,
մըկան նման մարդը՞ մեռնի...»
զարկաւ գըլխուն, մազը փետտեց,
երեսն ըրաւ արիւնլըռայ,
ու գըլխաբաց գեղը վազեց։

6

Գեղացիք որ տեսան՝ ըսին.
— Պառա՜ւ մայրիկ, ի՞նչ է եղեր,
ինչո՞ւ երեսդ արիւնլըռայ։
— Վա՜յ ես քօռնամ, մի՛ հարցրնէք.
մըկան նման մարդը մեռաւ,
աշխարհքն այսպէս անտէր մընաց.
ճընճուղն այնտեղ հողը գլխուն,
լորը իրեն թեւը կոտրած,
ծառը եղած ճրղակոտոր,

քարերը վար գլլոր-մլլոր,
Ջրերն ամէն հող ու պլղոր,
ես որ երեսս արիւնոտեմ՝
մեծ բան է...։

—«Ափսոս, ափսոս, հազար ափսոս,
որ այն տեսակ մարդը մեռաւ...։»
ափսոսացին ան գեղացիք,
սևեր հագան, սուգ նստեցան։

7

— Վայ, ո՞վ ըսաւ, ո՞վ ըսաւ...
— Հողը-գլխուն ճրնճուղն ըսաւ,
թեր կոտրած Լորիկն ըսաւ,
ճրղակոտոր Ծառը ըսաւ,
գլլոր-մլլոր Քարիկն ըսաւ,
Պլղոր-մլղոր Ջրիկն ըսաւ,
գլուխը բաց Պառաւն ըսաւ.
մեր Մկնիկը մեռեր է...
ալ ո՞վ մընաց այս աշխարհքը,
ալ ի՞նչ ապրինք այս աշխարհքը...։

ՈՍԿԻԻՆ ԿԱՐԱՍԸ

1

Ես մեր ծերերէն եմ լսեր, մեր ծերերն ալ իրենց պապերէն, անոնց պապերն ալ իրենց մեծերէն՝ թէ ժամանակով աղքատ հողագործ մը կար. այս հողագործը ունէր մէկ օրավար հող և մէկ լուծ եզ։

Ձմեռը, աղքատ հողագործին եզները սատակեցան։ Գարունը, վար ու ցանի ատեն, եզ չունէր որ վարէր, ուստի՝ հողը վարձով տուաւ իր դրացիին։

Այս դրացին, վարելու ժամանակ, կը տեսնէ որ խոփը բանի մը կը դպնայ։ Կը ծռի, հողը մէկ

կողմ կընէ, և կը գտնէ կարաս մը ոսկի։ Եղները լծուած կը թողու, կը վազէ գիւղը՝ հողատիրոջ քով, և կըսէ.

— Մէջդ լոյս, դրացի եղբայր. հողիդ մէջէն կարաս մը ոսկի դուրս ելաւ, եկուր տար։

— Չէ, աղբար, այդ ոսկին իմս չէ, կը պատասխանէ հողատէրը։ Արտին վարձքը դուն ես տուեր, դուն ես վարեր, ուստի հողին մէջէն ինչ որ դուրս գայ՝ քու հալալ հախդ է. ոսկի է դուրս եկեր, թող ոսկի ըլլայ, դարձեալ քուկդ է։

Կը սկսին վիճիլ. չեն համաձայնիր և կերթան թագաւորին մօտ գանգատի։

Թագաւորը կարաս մը ոսկիին ձայնը կը լսէ թէ չէ, աչքերը չորս կը բանայ և կըսէ.

— Ո՛չ քուկդ է, ոչ ալ անորը. ոսկին իմ հողիս մէջէն է ելեր, իմս է։

Մարդ կառնէ հեռը և կերթայ որ հանէ բերէ։ Կերթայ, բայց ինչ տեսնայ աղէկ. կարաս մը՝ մինչև բերանը լեցուն օձ...։ Թագաւորը զարհուրած՝ ետ կը դառնայ։

2

Թագաւորը հրաման կընէ որ պատժեն խաբեբայ գեղացիները։

— Չէ, թագաւո՛ր, ապրած կենաս, կաղաչեն խեղճերը. մեզ ինչո՞ւ կը պատժես. լաւ չես տեսներ, օձ չի կայ այն տեղ, ոսկի է, ոսկի...։

Թագաւորը նոր մարդ կը խրկէ՝ որ երթան,

անգամ մը ալ ստուգեն։ Մարդիկ կերթան և լուր կը բերեն թէ իրաւ ոսկի է։

Շատ կը զարմանայ թագաւորը, և ինքնիրեն կըսէ. «գուցէ աչքերս լաւ չտեսան կամ տեսածս այն կարասը չէր»։ Վեր կը կենայ և անգամ մը ալ կերթայ։

Կը բանայ կարասը, — դարձեալ մէջը լեցուն օձ։

Ա՛ս ինչ հրաշք է, կըսէ թագաւորը, չեմ հասկնար։

3

Խորհուրդի կը հրաւիրէ իր երկրին իմաստունները։

— «Բացատրեցէք,— կը հրամայէ իր իմաստուններուն. այս երկու մարդիկը, իրենց հողին մէջ, կարասով ոսկի են գտեր. ես որ կերթամ՝ կարասին մէջ օձ կը գտնեմ, ասոնք որ կերթան՝ ոսկի կը գտնեն. ի՞նչ է ասոր գաղտնիքը։

— Եթէ չես բարկանար, բացատրենք, թագաւոր ապրած, կըսեն իմաստունները։ Կարասով ոսկին՝ ազգատ հողագործներուն արդար աշխատանքին համար է խրկուած. երբ անոնք կերթան՝ իրենց վարձքին կերթան և միշտ ոսկի կը գտնեն. իսկ երբ դուն կերթաս, կերթաս ուրիշին իրաւունքը յափշտակելու, անոր համար՝ ոսկիի տեղ օձ կը գտնես»։

4

Թագաւորը իրաւունք կու տայ իմաստուն-ներուն, և դառնալով կըսէ հողագործներուն.

— Տէ՛ր, հիմա գացէք, տէր եղէք ձեր իրա-ւունքին և երկու եղբօր պէս հաշտութեամբ բաժնեցէք դանձը ձեր մէջ։

1. Ինչո՞ւ գիւղացիները երբ կարասին վրայ կերթային, ոսկի կը գըտ-նէին, իսկ երբ Թագաւորը կերթար՝ օձ կը գտնէր։
2. Ո՞վ պէտք է վայելէ աշխատութեան արդիւնքը։

ՔԱՄԻՆ ՈՒ ՄԱՐԱԳԸ

Քամին վազեց արագ արագ,
կեցաւ, պոռաց.— «մարագ, մարագ,
գիտե՞ս թէ ինչ ուժի տէր եմ,
բաց դուռդ որ քեզ յարդ բերեմ։»

Մարագն ըսաւ.— «Գընա՛ բանիդ,
ես կարօտ չեմ քու դարմանիդ.
յարդդ քեզի, զօրաւո՛ր տէր,
իմ դարմանս դուն մի՛ տաներ։»

1. Քամին ի՞նչ ըսաւ մարագին։
2. Մարագը ի՞նչ պատասխանեց։
3. Ինչո՞ւ այդպէս պատասխանեց։

Երիկունքն Գեղեցիկ Գաւառի մէջ

ՈՎ ԿԸ ՇԻՆԷ ՄԵՂՐԸ

Ուսուցիչը հարցուց աշակերտներուն.

— Գիտէ՞ք, մանուկներ, ո՞վ կը շինէ մեղրը։

Ամէնքն ալ միաբերան պոռացին. —«Մեղուն, մեղուն»։

— Շատ լաւ, բայց գիտէ՞ք թէ քանի տեսակ մեղու կայ, և ո՞վ է բուն մեղրը շինողը։

Տղաքը լռեցին, որովհետև չէին գիտեր։

Այն ատեն, ուսուցիչը ըսաւ.

— Տէ՛ ուրեմն, մտիկ ըրէք որ ըսեմ ձեզի։

Մեղուները երեք տեսակ են։

Մայր թագուհի

Կայ մայր թագուհին՝ որ միայն հաւկիթ կածէ և ձագեր կը բերէ։

Կան արու մեղուները՝ որ փեթակին վրայ կը հսկեն։

Գործաւոր մեղու

Արու մեղու

Կան նաև գործաւորները՝ որ ծաղիկներուն հիւթը կը ծծեն, մեղր ու մեղրամոմ կը պատրաստեն, և ունին սուր խայթոց։»

Տղաքը մտիկ կընէին։

— Բայց, գիտէ՞ք, տղա՛ք, մէկ փեթակի մէջ միայն մէկ հատ մայր թագուհի կայ. երբ ուրիշ մըն ալ ծնի, այն ատեն, ներսը մեծ բզզիւն մը

ՀՍՍՀ-ՍՍՌ

կը լսուի. հին մայր թագուհին, իր հետ առնելով արու մեղուները և գործաւորները, կը ձգէ կը հեռանայ, կերթայ ուրիշ տեղ՝ նոր փեթակ կազմելու։

—Այո, այո, ըսին մանուկները. գիւղացիները այդ բանին կըսեն թէ «մեղուն պարս տուաւ»։

—Ճիշտ է, ըսաւ ուսուցիչը։ Այսպէս, մեղուները քիչ տարիներու մէջ կը բազմանան։

Մենք մեղուներու մեղրը կուտենք, մոմը կը վառենք և ուրիշ բաներու կը գործածենք։

Մեղուն օգտակար միջատ է, և գիւղացիներուն համար շահաբեր։

1. Քանի՞ տեսակ մեղու կայ։
2. Ինչ կընէ մայր թագուհին։
3. Ինչ կընեն արու մեղուները։
4. Ինչ կընեն գործաւորները։
5. Մեղուն ինչո՞ւ օգտակար միջատ է։

ԱՅՈ ԵՒ ՈՉ

Այոն պզտիկ աշխուժ աղջիկ մըն էր, աչքերը ժպտուն, շրթունքները ժպտուն, քիթը դողդոջուն։

Երբ մայրիկը կըսէր. «երեսդ լուա, զգեստներդ մաքրէ»,—աղջիկը իսկոյն կը պատասխանէր.

— Այո, այո, մայրիկ։

Անոր երեսը միշտ մաքուր էր, մազերը սանրուած, զգեստները առանց կեղտի։

Ոչը պզտիկ դանդաղ տղայ մըն էր, յօնքերը կախ, աչքերը մռայլ և շրթունքները ուռած։

Երբ մայրիկը կըսէր. «երեսդ լուա, զգեստներդ մաքրէ»,— տղան կը պատասխանէր.

— Ո՛չ, չեմ ուզեր, ո՛չ։

Անոր երեսն ալ մրոտ էր, մազերն ալ խառն ի խուռն, լաթերն ալ փոշոտ։

Երբ մայրիկը կըսէր Այոին. «գնա, թաշկինակս բեր»,— աղջիկը կը կանչէր. «Այո՛ մայրիկ, հիմա»։ Եւ կը վազէր, կը բերէր թաշկինակը։

Ոչը երբեք մեծերուն խօսքը չէր կատարեր։ Երբ հայրիկը կըսէր. «գնա, ջուր մը բեր», անիկա ուսը վեր կը քաշէր և կը մրթմրթար. «Ո՛չ, չեմ երթար, ո՛չ»։

Ճաշի ժամանակ, երբ մայրիկը կըսէր Այոին՝ «անձեռնոցը վրադ կապէ, նստիր կերակուրդ կեր»,— աղջիկը կըսէր. «Այո՛, այո՛, մայրիկ. ա՜խ, աս ի՞նչ լաւ կերակուր է»։

Իսկ երբ Ոչին կըսէին «անձեռնոցդ կապէ, կերակուրդ կեր»,— կոշտ ու կոպիտ կը պոռար. «Ո՛չ, չեմ կապեր։ Էֆֆ, աս ի՞նչ գէշ կերակուր է»։

Երբ կը մթնէր ու մայրիկը ձայն կու տար Այոին, «ժամանակ է, լաթերդ հանէ ու պառկիր», աղջիկը իսկոյն ոտքի կելլէր ու կըսէր. «Այո՛, այո՛, երթամ պառկիմ։ Բարի՛ գիշեր, հայրիկ. բարի՛ գիշեր, մայրիկ»։

Իսկ Ոչը երբեք առանց լացի չէր երթար քնանալու. ոտքերը գետին կը դարնէր, կը յամառէր. «Ո՛չ, չեմ պառկիր. ո՛չ, չեմ քնանար»։ Ու կու լար, կը պոռար. գօրով կը հանէին լաթերը ու կը պառկեցնէին։

Ու երբ Ոչը տեղ մը հիւր երթար ու դուռը զարնէր, զինք տեսնելով, ներսէն կը պատասխանէին. «Ո՛չ, ո՛չ, այսօր մենք գործ ունինք», և շուտով դուռը կը փակէին երեսին։

Իսկ երբ Այո՛ն ըլլար դուռը ծեծողը, անմիջապէս կը բանային, ղէմը կը վազէին, «Օ՜, բարի եկար, բարի եկար, հրամմէ, հրամմէ» ըսելով ներս կը տանէին։

ԿՈՅՐԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ

Ցորեկ ատեն
խարխափելէն
չորս հատ կոյրեր, եկան դպան
փիղի մը մեծ հրսկայական։

Մէկն որ մարմնին դպաւ ահեղ.
— Հէյ, ըզգո՛ւշ, պոռաց, պատ մը կայ այստեղ։

Միւսն որ ոտքն էր շոշափեր իր դէմ՝
— Ի՜նչ պատ, կոճղ է, կոճղ, ըսաւ ժպտադէմ։

Երրորդին ձեռքը կընճիթին էր ինկեր.
— Օ՜ձ է, օձ, դոռաց, ա՛լ ինչ էք կեցեր։

Մինչ չորրորդը որ պոչէն էր բռներ՝
քա՜հ քահ խնդալով կը կրկնէր անհոգ.
— Իրա՜ւ որ կոյր էք, աղբա՛ր ներ խեղոք.
ո՛չ աս է, ո՛չ ան, կախուած թոկ է, թոկ...

Ու պոռպռալով չորսն ալ մէկ բերան
ինչպէս որ փիղին
դէմն եկած էին,
այնպէս ալ կոյր-կոյր, կրկին ետ դարձան,
եւ լեռան նրման
փիղը չի ճանչցան։



1. Առաջին կոյրը ինչո՞ւ պոռաց թէ «պատ մը կայ այստեղ»։
2. Երկրորդ կոյրը ինչո՞ւ «կոճղ է» ըսաւ։
3. Երրորդը ինչո՞ւ «օձ է» ըսաւ։
4. Չորրորդը ինչո՞ւ «կախուած թոկ է» պոռաց։
5. Կոյրերը քանի՞ բանի նմանցուցին մէկ փիղը։
6. Վերջը վերջը գիտցա՞ն թէ փիղ է։ Ինչո՞ւ։

ԿԱՂԱՆԴԻՆ ՕՐԸ

Կաղանդ պապան եկաւ և ինչեր, ինչեր բերաւ Տիգրանիկին։ Հայրիկը, հօրքոյրը, մեծմայրը, մօրաքոյրը, մայրիկը՝ ամէնքն ալ, աղուոր աղուոր կաղանդչէքներ տուին անոր։

Տիգրանիկը այնչափ նուէրներ ունի՝ որ չգիտեր թէ ո՛ր մէկին նայի, ո՛ր մէկին հետ խաղայ։ Մեծ մայրիկը չամիչ, պատեղ ու ռոճիկ տուեր է. մօրաքոյրը՝ փայտէ ձի մը, ճերմակ ստեով և ճերմակ թամբով. հօրաքոյրը՝ պատկերազարդ գիրք մը. մօրաքոյրը՝ կապոյտ աչքերով, դեղձան մազերով տիկին մը։

Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն ուրախ է Տիգրանիկ։ Նստեր է սեղանին առջև, անոր վրայ շարեր է իր նուէրները և կը խաղայ։ Բոլորն ալ իրենն են,մինակ իրենը։

Ահա, իր պատուհանին տակէն կանցնի դրացիենց Մանուկը։ Մանուկը կաղանդչէք չունի. անոր մայրիկը մեռած է և հայրիկն ալ աղքատ է։

Մանուկ պատուհանէն ներս կը նայի, և կը դիտէ Տիգրանիկին նուէրները։

Տիգրանիկ մէկիկ մէկիկ կը հանէ իր խաղալիկները։ Կը ցուցնէ իր պատեղն ու չամիչը, իր փայտէ ձին ու տիկինը. կը ցուցնէ ու մոքէն կըսէ. «Մանուկը թող տեսնէ թէ ես ինչքան գեղեցիկ բաներ ունիմ»։

Բայց, Տիգրանիկին մայրիկը հոն է, և կամացուկ մը կըսէ իր դաւկին.

— Իմ անուշիկ տղաս, տես, Մանուկը կաղանդչէք չունի. բարի տղաքը պէտք է որ ուրախացնեն իրենց ընկերները։ Դուն ալ բարի եղիր, և խաղալիկներէդ մէկը տուր Մանուկին։

Տիգրանիկ առաջին անգամ կը վարանի. բայց, իր սիրտը շատ բարի է։ Երբ կը տեսնէ որ մայրիկը չամիչ ու նուշ կը լեցնէ Մանուկին գրպանները, ինք ալ կառնէ իր խաղալիկներէն մէկը, տիկինը, և կերկնցնէ Մանուկին։

1. Կաղանդին դո՞ւն ինչ նուէրներ ստացար։
2. Ինչ բրաւ Տիգրանիկ Մանուկին։
3. Ինչ պէտք է ընեն բարի մանուկները։

ՅՈՐԵՆԻ ՀԱՏԻԿԸ

1

Դեկտեմբերի մէջ էր։ Ծառերը սառեր էին, և տրտում տխուր վեր կը բարձրացնէին իրենց չոր ճիւղերը։ Երկինքը դարձեր էր մոխրագոյն, և ձիւնը կու գար, կու գար անհատնում. կու գար, կը ծածկէր գետինը։

Գեղացի փոքր աղջիկ մը դուրս ելաւ իրենց տունէն և դպրոց կերթար։

Ամէն առտու, կը քալէր դաշտին մէջի այդ ուղիէն։

Փոքրիկ աղջիկը կը քալէր չուզելով. սիրտը նեղ էր. ցուրտէն կը մսէին ձեռքերը, կարմրեր էին երեսները. հազիւ թեւին տակ կը պահէր իր դասագրքերը, և ձիւնը կը ճարճատէր ոտքերուն տակ։

— Ճամբան երկար է և շատ դժուար, կըսէր ինքնիրեն։ Քանի անգամ տակաւին պիտի անցնիմ դառնամ ասկէ։ Ո՞ւր է արևը. ո՞ւր են ծաղիկները. ե՞րբ պիտի գայ գարունը։

Եւ խեղճ աղջիկը կը քալէր տրտում տխուր։ Արցունքի կաթիլ մը կախուեցաւ իր թարթիչներէն։

2

Բայց ահա, կարծես ձայն մը կու գայ ականջին։ Կը ծռի, մտիկ կընէ։

Ձայնը գետնէն կու գայ, թեթև, քաղցր, երգի պէս անուշ, և կըսէ։

Ցուրտ է, ցուրտ է հողին տակ,
բայց պիտի գայ արեգակ.
պիտի գան տօն ու Զատիկ,
տաքուկ օրեր ու ծաղիկ.
լըսէ՛ ինծի, ո՛ այ աղջիկ։
Ցուրտ է, ցուրտ է հողին տակ,
բայց ես չեմ լար գըլխահակ.
կերգեմ ուրախ, կըսպասեմ,
որովհետև լաւ գիտեմ՝
պիտի գան տօն ու Զատիկ,
արև օրեր ու ծաղիկ.
հաւատա՛ ինծի, ո՛ այ աղջիկ։

3

Աղջիկը խոշոր խոշոր կը բանայ աչքերն ու ականջները. չի համարձակիր առաջ երթալ։

Վերջապէս կը հարցնէ.

— Ո՞վ ես դուն։

— Յորենի հատիկ, կը պատասխանէ քնքուշ ձայնը։

— Ի՞նչ կընես հոս։

— Երկու ամիս է որ երկրագործին ձեռքը ձգեց զիս այս ծակին մէջ, և կը կենամ այս մութ տեղը։

— Դուն չի՞ լացիր բնաւ։

— Երբեք։

— Հիմա ալ չե՞ս ուզեր որ լաս ինծի հետ։

— Ո՛չ, ինչո՞ւ լամ. ամօթ է լացը. կորիճ մարդը չի լար։

Ցորենի հատիկը նորէն սկսաւ երգել իր երգը։

Այդ երգին մէջ, ըսաւ թէ՝ ահա դպրոցին զանգակը կը հնչէ, շուտով դասերը պիտի սկսին, պէտք է աճապարել և դասէն ետ չմնալ։

Աղջիկը, ինք ալ, կը լսէ զանգակին ձայնը. կը սրբէ արցունքը, կը վազէ դպրոց։

4

Ձմեռը շուտ անցաւ. ահա կարմիր արևը կը փայլի. ցորենի հասկերը կանչցեր են. եկած է Զատիկը, թռչունները կը ճլուլլան ու թիթեռնիկները զիրար կը հալածեն՝ թուփերուն վրայ։

Գարուն է։ Ցորենի հատիկը դուրս ելած է հողին տակէն. մութ տեղը փակուած առաջուան տրժգոյն բանտարկեալը չէ. հպարտ ցողուն մըն է հիմա, որ վեր կը բարձրանայ ու կը խնդայ արևին երեսը։

Աղջիկը կը ճանչնայ ցորենի հատիկը, կը ժպտի ու կըսէ.

— Որքա՜ն իրաւունք ունիս եղեր, կանա՜չ ցորեն. ես ալ քեզի պէս կորիճ եղայ և ա՛լ չեմ լար։

1. Որո՞նք են ձմեռուան ամիսները։
2. Դեկտեմբերին մէջ ինչպէ՞ս կըլլան ծառերը, երկինքը և ճամբաները։
3. Ինչո՞ւ տխուր էր փոքրիկ աղջիկը և ի՞նչ բանի դէմ կը գանգատէր։
4. Ի՞նչ երգեց ցորենի հատիկը և ի՞նչ ըսաւ փոքրիկ աղջիկն։

ԻՆՉ ԿԱՅ, ԻՆՉ ԿԱՅ

1

Բադերը կը լոգնային տղմուտ ջուրին մէջ. կը լոգնային ու կը կռկռային։

— Ը՜, կը լսե՞ս, աս ի՞նչ ձայն է, հարցուց անոնցմէ մէկը իր ընկերոջ։

— Զարմանք. այսքան խոշոր ձայն լսուած չէր այս ճահիճին մէջ. անպատճառ մեծ բան մը պատահած է, ըսաւ միւսը։ Երթանք անգամ մը տեսնենք։

Ու երկու խելոք բադերը, կռկռալէն-կռկռալէն, աճապարանքով սկսան լողալ առուն ի վար։

Միւսները որ տեսան իրենց ընկերներուն լողալը, խորհեցան թէ՝ անշուշտ առատ ճճիներ գտած են, ուստի խումբով սկսան, իրենք ալ, վազել անոնց ետևէն։

2

Վայնասուն մըն է փրթաւ առուին վրայ. կռկռուք, իրարանցո՛ւմ, աղմո՛ւկ։



Ծեր բադ մը անոնց դէմ եկաւ.

— Ճանը՛մ, ըսաւ, բան չի կայ, բան չէ պատահեր. եղածը սա է որ ծառին մէկ ճիւղը կոտրելով՝ առուին մէջ է ինկեր։

Լսողը ով. մէկը հարցում կընէ, հազարը պատասխան կու տայ. կը շաղակրատեն, կը պոռան, իրար կը հրեն ու կը լողան. կարծես թէ երկինքէն լուսնկան փրթեր ու առուին մէջ է ինկեր։

3

Կուռթ մը իր տասը ձագերը ետին ձգած, առատուան պտոյտը կընէր. լսեց բաղերուն աղմուկը և տեսաւ անոնց արագ արագ լողալը առուն ի վար. զարմանքէն աչքերը խոշոր խոշոր բացած, կանգ առաւ։



— Դուք հանդարտ մը կայնեցէք սա պատին ետև, երթամ տեսնեմ թէ ինչ է պատահեր, ըսաւ իր ձագերուն. չըլլայ թէ կոկտաք, չըլլայ թէ ձեր տեղէն շարժիք՝ մինչև որ գամ։

4

Հովիւին գամբռը, քիչ մը հեռուն, արեւին տակ կը քնանար. ինք ալ յանկարծ արթնցաւ աղմուկէն։ Ոտքի ելաւ. ականջները տնկեց, մէյ մը հաշեց դէպի առուին կողմը, և նետի պէս թռաւ այն ուղղութեամբ։

Շանը վազելը տեսնելով, Գզիրին կովն ալ գլուխը խոտէն վեր առաւ. «շունը անշուշտ բան մը գիտէ որ կը վազէ» ըսելով՝ սկսաւ ինք ալ ոտքերը վերցնել. հեռուէն լսեց որ Քէհեայեին ձին կը հարցընէ շանը.

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ։

— Չեմ գիտեր, պատասխանեց շունը. չե՞ս լսեր աղմուկը. երթամ տեսնեմ ինչ է պատահեր։

Ձին մօտեցաւ արօտի ցանկապատին. նայեցաւ դէպի առուին կողմը. բայց, ծերացած, յոգնած, քիչ մըն ալ ականջները խուլ ըլլալուն՝ «բան չունիս, ինչ կուզէ ան թող ըլլայ» ըսելով, տեղէն չշարժեցաւ ու սկսաւ նորէն արածել։



5

— Լսեցէք, լսեցէք, պոռաց անծեղ մը մօտիկ ծառին վրայէն՝ իր ընկերներուն։

— Ի՞նչ կայ որ, հարցուցին ընկերները խռոված։

— Չէ՞ք լսեր, աղմուկ, իրարանցում. անպատճառ կռիւ ըլլալու է։ Տեսայ որ գամբռը

բոլոր ուժով կը վազէր. Գգիրին կարմիր, պառաւ կովն ալ, շունչը կտրած, անոր ետևէն. ու դեռ ուրիշներ ալ. ամէնքն ալ այն կողմը կերթան։



— Կռա՜, կռա՜. մենք ալ երթանք, աղաղակեցին անծեղները. չէ, կենալ չըլլար, ետ մնալու չի գար։

Եւ ահա, անծեղները, կայծակի պէս՝ թռան ու ակնթարթի մը մէջ թառեցան առուին եզերքի ուռենիներուն վրայ։

6

— Զարմանալի՛ բան, ըսաւ ճնճղուկին մէկը. բոլոր ագռաւները գացին, հաւաքուեցան սա վարի կողմը. մէծ բան մը պատահած ըլլալու է. երթանք տեսնենք թէ ինչ կայ։

Ճնճղուկն է թռաւ. թռաւ թէ չէ՝ իր հազարաւոր ընկերներն ալ, որ վանքին պարտէզը գողութեան մտած էին, ձգեցին պտուղները և վազեցին, ամպի պէս, իրենց ընկերոջ ետևէն։

7

— Ինչ իրարանցում է աս, ըսաւ ծերուկ

բուիճակ մը։ Խնդիր մը կանցնի կը դառնայ՝ որ չեմ հասկնար։ Չէ, աղէկ բան չերևնար ինծի. եկէք, հաւաքուինք ու մեր գլխուն ճարը նայինք։

Ու բոլոր բուերը եկան, կարգով շարուեցան՝ Վանքին զանգակատան մէջ։

— Զարդի պէս բան մը ըլլալու է, ըսաւ մէկը։

— Չէ, կրկնեց միւսը, բանակ մը որմնադիր է, որ կու գայ Վանքին աւերակները շինելու. շո՛ւտ, բոյներուն ճարը։

8

Բայց, ճիշտ այն պահուն որ հովիւին գամբռը առուին եզերքը կը հասնէր, արդէն երկու բադերը ետ կը դառնային, և իրենց ընկերներուն յայտներ էին աղմուկին պատճառը։

Ծառին մէկ ճիւղը կոտրեր և ջուրին մէջ էր ինկեր։

Ու բադերը ձայներնին կտրած, խումբով կը վերադառնային դէպի ճահիճը։

— Ի՞նչ էր պատահեր, կը հարցնէ գամբռը՝ խումբին ետևը մնացած վերջին բադին։

— Բան չի կա՛յ, բան չի կա՛յ, կը պատասխանէ բադը։

— Հապա ինչ էր այս բոլոր աղմուկին պատճառը։

— Ոչինչ բանի համար։

— Ոչինչ բան, կը կրկնէ կուռթը՝ դառնալով իր ձագերուն մօտ։

— Ոչինչ բանի մը համար, կրսէ շունը՝ սիրտը սաստիկ նեղացած, որ պարապ տեղը քըրտինքի մէջ մնաւ։

— Ըսաւ թէ ոչինչ բան է եղեր, այնպէս չէ՞, զամբռ եղբայր, կը հարցնէ ծերուկ կովը, սկսելով նորէն արածիլ։

— Ի՞նչ կար որ, անոնց կը պոռայ ձին, ցանկապատին վրայէն վիզը երկնցնելով։ Բան չի կայ եղեր. աղէկ որ պարապ տեղը անհանգիստ չըրի ես զիս։

— Ոչինչ, ոչինչ, կը ճչան ճնճղուկները։ Ինչ խայտառակութիւն. այսքան մարդիկ հաւաքուեցան պարապ աղմուկի մը երեսէն։

Ու կը թռին, դարձեալ, Վանքին պարտէզը, և կիջնեն տանձենիներուն վրայ։

— Եղածը ան է որ բան չի կայ եղեր, կը պոռան նոյնպէս անծեղները։

— Բան չի կայ, կրսեն բուիճակները։ Բայց, կը վայելէր պարապ բանի համար այսքան աղմուկ հանել. ամօթ, ամօթ։ Ոտիկան չի կայ, ինչ է, այս երկրին մէջ...

Իսկ այս ամբողջ իրարանցումէն՝ մինակ կատու մը գոհ էր մնացեր. որովհետև, տեսնելով որ կուռթը չի կայ, անուշ էր ըրած անոր ձագուկներէն երկու հատը։



ՀԵՂԵՂԸ

— Հեղեղ, հեղեղ, կը պոռային ամէն կողմէ. կը պոռային սարսափահար և կը փախչէին խենթերու պէս։

Յորդահոս գետը փլցուցեր էր վերի հողաբլուրը, և կը բերէր ցեխի ահագին լեռը գեղին վրայ։

Կը ցնցուէր գետինը. տունները իրարու ետեւէ կանհետանային. ծառերը կը կորսուէին. մարդ ու կին, ով որ կրնար, կուգար, կը լեցուէր եկեղեցին։

Մեր տունը բարձրադիր էր։

Այդ ատեն, հայրս մոռցեր էր մեզ. դուրս էր ելեր գլխաբաց. կերթար հեղեղին մէջէն, մինչև ծունգերը ցեխին մէջ խրած. կերթար՝ մանուկներն ազատելու ջուրին բերնէն։

— Մի՛ երթար, մի՛ երթար, կը պոռար մայրս։

— Թող, կնիկ, մարդիկ օգնութեան կը կանչեն,— կը հասկնաս, մարդիկ։

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Ուրախ ձայնով, ամպոտ սարէն
Ջուրն է կուգայ, կանցնի գեղէն։
Թուխ մանուկ մը դուրս է վազեր,
Ձեռքն ու երեսն է լըուացեր։

Լըուացեր է ձեռքն ու երես,
ու դարձեր է՝ խօսեր այսպէս.

— Դուն ո՞ր սարէն կուգաս, Ջըրիկ,
իմ պաղ Ջըրիկ ու անուշիկ։
—«Ես այն սարէն կուգամ մըթին,
որ հին ու նոր ձիւնն է գըլխին։»

— Դուն ո՞ր առուն կերթաս, Ջըրիկ,
իմ պաղ Ջըրիկ ու անուշիկ։
—«Ես այն առուն կերթամ զըուարթ,
ուր ափերն են շուշան ու վարդ։»

— Դուն ո՞ր այգին կերթաս, Ջըրիկ,
իմ պաղ Ջըրիկ ու անուշիկ։
—«Կերթամ դալար ես այգին ան,
որուն տէրն է ժիր այգեպան։

ԱՌԱՋԻՆ ՁԻՒՆԾԱՂԻԿՆԵՐԸ

1

Երկար, սպիտակ մօրուքով Ծերունին նըստեր էր ու կը մտմտար։ Մութ ու ցուրտ էր անոր շուրջը։

— «Աշխարհիս մէջ մէկը չի կայ որ ինծի չափ գործեր բրած ըլլայ», կը խորհէր Ծերունին, և մէկիկ մէկիկ կը համրէր իր գործերը։

Իր չորս կողմը ձայն-ձուն չի կար։ Յանկարծ աղմուկ մը եկաւ ականջին։

— Ինչ աղմուկ է աս, ըսաւ։ Չէ՞ որ ես ամէն բանի լուութիւն հրամայած եմ։ Այս ձայները նման են Ջրի կարկաչին... բայց չէ՞ որ Ջուրին ալ հրաման տուած էի որ լռէ։ Հապա սա շըշուկը, իրաւ որ կը նմանի թռչուններու երգին... բայց ես բոլոր թռչուններն ալ խրկած չէ՞ հեռաւոր հարաւը։

2

Ծերունիին խօսքը բերանն էր դեռ, երբ տեսաւ որ իր առջև կանգնած է ոսկեգանգուր և բոսորագէմ պատանի մը։

— Ո՞վ թողուց քեզ որ հոս եկար,— ըսաւ Ծերունին։

— Մի բարկանար, ալե՛ր. եկայ տեսնելու քու գործերդ. ըսէ՛ նայիմ, ի՞նչ է քու ուժդ։

— Ես կը փչեմ գետինը և անիկա կը ծածկուի սառոյցով, ըսաւ Ծերունին։

— Իսկ ես կը փչեմ սառոյցին վրայ և անիկա կը հալի, պատասխանեց Պատանին։

— Ես կը թափահարեմ գլուխս ու երկիրը ձիւնով կը ծածկուի։

— Ես ալ որ թափահարեմ ոսկեհուր գանգուրներս, պայծառ կը ժպտի արեգակը ու կը հալի ձիւնը։

— Ես կը հրամայեմ թռչուններուն՝ «լռեցէք, հեռացէք.» ու անոնք իրենց թևերը բանալով՝ կը թռին հեռաւոր երկիրներ, ըսաւ Ծերունին։

— Իսկ ես կըսեմ. «թռչուններ, վերադարձէք», ու անոնք կուգան, օդին մէջ կը թռչին ու կերգեն, պատասխանեց Պատանին։

— Երբ ես սառոյցէ մատներովս դպնամ տերևներուն, տեսնես թէ անոնք ամէնքն ալ ինչպէս, սարսափահար, գետին կը թափին ծառերէն։

— Ես երբեք տերևի թափիլ չեմ տեսեր. ես տերևները միշտ կանաչ, մաղաշ և ուրախ կը տեսնեմ, պատասխանեց Պատանին։

3

Ծերն ու Պատանին, այսպէս, խօսեցան ամբողջ գիշերը։ Ծերունին սկսաւ յոգնիլ, մինչդեռ Պատանին հետզհետէ աւելի կը զուարթանար։

Բացուեցաւ լոյսը. փայլեցաւ արեգակը, ու երկինքը լեցուեցաւ թռչուններու ուրախ ձայնով։

Պատանին հասկցաւ որ ամէնքն իմացած են իր գալուստը. դարձաւ որ մնաս բարով ըսէ Ծերունիին։

Բայց Ծերունին չի կար...

Ծերունին չի կար. միայն, իր նստած տեղը կերևնային մէկ քանի սպիտակ բիծեր, ձիւնի վերջին մնացորդները։

Պատանին մօտեցաւ. ինչ տեսնէ աղէկ. անոնք ոչ թէ ձիւնի մնացորդներ էին, այլ սպիտակ ձիւնծաղիկներ, գարնան առաջին նշանները։

Գիտցաք թէ ով էր Ծերունին և ով էր Պատանին։

1. Ո՞վ էր Ծերունին և ո՞վ էր Պատանին։
2. Ըսէք թէ ինչ գործեր ըրած էր Ծերունին և ինչ գործեր պիտի ընէր Պատանին։

ՁՈՒԿԵՐԸ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Թռչունները օդին մէջ կը թռչին, որովհետև թևեր ունին։

Ձուկերը ջուրին մէջ կը լողան, որովհետև լողակներ ունին։

Հազարաւոր տեսակ ձուկեր կան. կան մանրերը՝ հազիւ մատի մը չափ. կան խոշորները, որոնք տուներու չափ մեծ են, և կրնան՝ իրենց կռնակով, նաւեր անգամ շրջել։

Աշխարհի ամէնամեծ կենդանին՝ կէտ ձուկն է, որ կապրի ովկիանոսին մէջ։

Բայց, ձուկերուն մէջէն ամէնէն վտանգաւորը՝ շնաձուկն է։

Շնաձուկը կատաղութեամբ կը յարձակի մարդուն վրայ, բերնի մէկ հարուածով կը փրցնէ անոր թեւը, ոտքը, և այսպէս կտոր-կտոր ընելով՝ կուտէ։

Ձուկերը, երբ ջուրէն դուրս ելլեն՝ անմիջապէս կը մեռնին։

Բայց, ձուկերն ալ, ատեն ատեն, ջուրին երեսը կելլեն և իրենց խռիվներով օդ կը շնչեն։

Թռչուններ կան որ ջուրին մէջ լողալ գիտեն. օրինակի համար, բադը։ Այդ տեսակ թռչունները կը կոչուին՝ ջրային թռչուն։

Ջրային թռչունները կրնանք ճանչնալ իրենց ոտքերէն։ Նայեցէք բադին ոտքերուն. անոնք ծածկուած են տեսակ մը թաղանթով, որպէսզի լողալու ատեն՝ կարող ըլլան ջուրը եւ հրել։

1. Թռչունները ինչո՞վ կը թռչին։ 3. Ձուկերը ինչ բանով օդ կը շնչեն։
2. Ձուկերը ինչո՞վ կը լողան։ 4. Որո՞նք են ջրային թռչունները։
5. Ջրային թռչուններուն ոտքերը ինչո՞վ ծածկուած են։

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՏՈՒՆ

Այնտեղ ուր հովը կը խաղայ ադատ
ու գետն աղմուկով կերթայ, կանգ չառներ,
այնտեղ իր բարի մօրը հետ խանդակաթ՝
անհանգիստ ու խենթ տղայ մը կապրէր՝
մութ խրճիթի մէջ,
հին խրճիթի մէջ՝
գետին եղերքը,
ծառերուն տակը։

Օր մըն ալ յանկարծ
անհանգիստ տղան
ըսաւ իր բարի մօրը
խանդակաթ.
— Ո՛չ, մայրիկ, կերթամ ես օտարութեան.
«աշխարհիս միակ տեղը գէշ ու վատ՝
«այս մութ խրճիթն է,
«այս հին խրճիթն է՝
«գետին եղերքը,
«ծառերուն տակը։

«Թող, երթամ, շրջիմ աշխարհէ աշխարհ,
«ճամբորդեմ՝ լաւ լաւ տեղեր տեսնելու,
«ամէնէն լաւը ընտրեմ մեզ համար,
«գամ քեզ ալ առնեմ ու փախչինք՝ հեռու՝

«այս մութ խրճիթէն,
«այս հին խրճիթէն՝
«գետին եղերքը,
«ծառերուն տակը»։

Ու գընաց, անցաւ երկրիս հինգ մասեր,
տեսաւ շատ տուներ մեծ ու հոյակերտ,
բայց միշտ ամէն տեղ բան մը պակաս էր...
եւ հառաչելով վերադարձաւ ետ՝
այն մութ խրճիթը,
այն հին խրճիթը՝
գետին եղերքը,
ծառերուն տակը։

Մայրիկը հարցուց. «զաւակս, զբաղ»,
աչքը ձգելով իր տղուն վրայ.
— Շրջեցայ, մայրիկ, աշխարհէ աշխարհ,
«բայց ամէնէն լաւ, քաղցր որ տուն կայ՝
«այս մութ խրճիթն է,
«այս հին խրճիթն է՝
«գետին եղերքը,
«ծառերուն տակը։

1. Ինչու օտարութեան գնաց տղան։
2. Որո՞նք են աշխարհի հինգ մասերը։
3. Ինչո՞ւ նորէն տղան ետ վերադարձաւ. ի՞նչ ըսաւ իր մօրը։
4. Ինչ ըսել է հայրենական տուն։

ԱՇԿԵՐՏ ՄԱՐՏԻՐՈՍԸ

Աշկերտ Մարտիրոսը նստեր է վարպետին դէմ, ու կը բանի։

Վարպետը հին կօշիկ մը տուեր է իրեն՝ որ կարկատէ։

— Մարտիրոս, գամէ գամերը ու կարէ աս ծակը. լաւ շինէ, տղաս, լաւ շինէ, որ ձեռքդ աղէկ գործ հանել սորվի։

Մարտիրոսին վարպետը բարի մարդ է. խօսք է տուեր որ՝ Զատկուայ համար, ձեռք մը նոր լաթ պիտի առնէ իրեն, և զոյգ մը ալ աղուոր կօշիկ պիտի կարէ։

Ու Մարտիրոս, փոքր մուրճով, կը գամէ գամերը, որպէս զի, յետոյ, հերիւնով ծակէ կաշին, ու ասեղով կարէ փրթած տեղերը։

Կը բանի ու կը մտածէ. «ահա Մեծ-Պահքին երկու շաբաթը եկաւ, մօտ է Միջինքը։

«Խթման շաբաթը եկածին պէս, կանուխ կը հագնիմ նոր լաթերս. կը համբուրեմ մօրս ձեռքերը, ան ալ կը շնորհաւորէ զիս. «շատ ապրիս, տղաս, մէկդ հին՝ հազարդ նոր ըլլայ» կըսէ, և կարմիր հաւկիթ կուտայ ինծի։

«Հաւկիթները կը դնեմ գրպանս, կերթամ ժամուն բակը։ Իրկուայ կոչնակը զարկաւ թէ չէ՝ կը մտնեմ եկեղեցի, կը կենամ դասը. Տէրտէրը որ «առէք, կերէք» ըսաւ, անմիջապէս դուրս կելլեմ և հաւկիթը կը նետեմ բերանս...»

Ու Մարտիրոս ուրախ է, կը գամէ գամերը, կը գամէ արագ արագ։

1. Ինչ կը տեսնէք այս պատկերին մէջ։
2. Ինչ կընէ վարպետը. ինչ կընէ աշկերտը։
3. Ինչ կը տեսնէք ուրիշ խանութներու մէջ։

ԱԾՈՒԽ, ՀԱՆՔԱԾՈՒԽ

1

Քեռի Օհանը ածխագործ էր. Հայկ օր մը անոր հարցուց.

— Քեռի, դուք ինչպէս կը շինէք ածուխը։

Քեռի Օհան խնդաց։

— Քեզ օր մը անտառ տանիմ որ տեսնես, ըսաւ։ Այ, այսպէս կը շինենք ածուխը. լսէ. անտառէն փայտ կը կտրենք. յետոյ, գետնին մէջ

խոշոր փոս մը կը բանանք. այդ փոսին մէջ կը շարենք կտրուած փայտերը, կրակ կը փակցնենք անոնց ու անմիջապէս կը ծածկենք հողով։ Փայտերը կը վառին, կը վառին, կը դառնան ածուխ...

— Ինչու՞ հողով կը ծածկէք վառած փայտերը, քեռի։

— Է՛, եթէ չծածկենք, փայտերը վառելով, վառելով՝ մոխիր կըլլան։

2

Հայկ շատ հետաքրքիր էր. քիչ մը մտմտաց ու նորէն հարցուց.

— Քեռի, այլ ուրիշ տեսակ ածուխ չի կայ։

— Կայ, ինչպէս չէ, հանքածուխը։ Հանքածուխը մարդիկ չեն շիներ. անիկա հանք է և կը գտնուի գետնին տակ. ածխագործները կը փորեն գետինը, խորունկ հորեր կը բանան ու դուրս կը հանեն։

— Յետոյ, քեռի։

— Յետոյ, գործարաններուն մէջ կը մաքրեն, կը զտեն ու կը ծախեն զանոնք։ Մեծ մեքենաները, շոգեկառքը, շոգենաւը՝ հանքածուխի կրակով կը բանին։ Վառարաններու մէջ ալ կը վառեն հանքածուխը։

— Հայաստանի մէջ հապա հանքածուխ ինչու չի կայ։

— Ինչպէս չի կայ. կայ, մինակ թէ գետնին տակն է, օր մը որ հանքեր բանան, կը հանեն...

Եւ, քեռի Օհան խոստացաւ Հայկին, որ գալ շաբթու գինք անտառ տանէ. տանէ որ աչքովը տեսնէ թէ ինչպէս կը շինեն փայտէ ածուխը։

1. Կրակը ի՞նչ բաներու կը գործածենք։
2. Կրակէն զատ ալ ի՞նչ բան կայ որ տաքութիւն կուտայ։
3. Ի՞նչ պիտի պատահէր եթէ մարդիկ կրակ չունենային։ Հապա արևին տաքութի՞ւնը ի՞նչ օգուտներ կուտայ։

ԳԱՐՈՒՆ

Ծաղկեր են կըրկին
անտառն ու այգին.
կը ֆըշայ ուժգին
ջուրը գետակին։

Սիրուն թըռչուններ
համերգ են կազմեր.
արտէն ու դաշտէն
կերգեն, կը կանչեն։

Թիթեռներն ուրախ
կը թըռչին նորէն.
ճան, տեսքիդ մատաղ,
Գարուն է արդէն։

ՄՈՒԿԸ, ՃԱՅԵԿԸ ԵՒ ԲԱԶԷՆ

1

Մուկը օր մը մօտեցաւ ճայեկին ու ըսաւ.

— Կնքամայր, կըսեն թէ այս ծովուն մէջ կղզի մը կայ, ուր խոտի տեղ շաքարեղէգ կը բուսնի. ճար մը ըլլար, հեղ մը երթայի՝ տեսնէի այդ պատուական երկիրը...

— Եկուր, երթանք միասին, ըսաւ ճայեկը։

— Գալս աղէկ, բայց ի՞նչպէս գամ, խանը՛մ ճայ. դուն թև ունիս՝ կը լողաս, ե՞ս ինչ ունիմ։

— Ես քեզ շալակս կառնեմ, ըսաւ ճայեկը։

Մուկը ցատկեց ճայեկին կռնակը, ոտքերը տակը ծալեց, խածաւ անոր վիզին փետուրէն և գոցեց աչքերը։

Ճայեկը սկսաւ լողալ։

2

Շատ գացին, քիչ գացին, հասան վերջապէս շաքարեղէգի կղզին։

Մուկը իջաւ ճայեկին շալակէն, և ի՞նչ տեսնայ աղէկ. երկիր մը որ, թըհու, աչքդ կտրածին չափ նայիր, շաքարեղէգ, շաքարեղէգ, շաքարեղէգ։

Մուկը ասոր տեսաւ, խելքը գլխէն գնաց.

ինկաւ շաքարեղէգներուն մէջ ու կորսուեցաւ։

Կրծեց հա՜ կրծեց, եօթն օրուան ուտելիք մէկ ժումի մէջ փորը դրաւ։

Բայց մէյ մըն ալ աչքը բացաւ որ կնքամայրը չի կայ...

Ճայեկը հանգչեր էր քիչ մը, նայեր էր չորս բոլորը, յետոյ ջուրը մտեր, դարձեր էր ծովը։

— Վո՜ւյ, գալիքը գլխուս, ճչաց մուկը. ճայեկը գնաց ու ես մնացի այս տեղը. ինչպէս պիտի դառնամ տունս. ո՛չ ճամբայ գիտեմ, ո՛չ լողալ. աղջե՛ւս ջուր, եաե՛ւս ջուր...

3

Մուկը սկսաւ լալ ու հեծեծել։

Հոս վազեց, հոն վազեց՝ որ գլխուն ճար մը գտնէ։

Տեսաւ ծովուն եզերքի ժայռերը. «անգամ մը այդ բարձր ապառաժներուն վրայ ելլեմ, տեսնեմ փրկութեան ճամբայ մը կը գտնե՞մ», ըսաւ ինքնիրեն։

Ցատկեց, մագլցեցաւ, ելաւ ժայռերուն վրայ. նայեցաւ մէյ մը կապոյտ երկինքին, մէյ մը խորունկ ջուրերուն։ Չի կրնար թռչիլ, չի կրնար լողալ։ Ի՞նչ ընէ։

Նորէն սկսաւ լալ։

Բազէ մը, որ թառեր էր մօտիկ քարերէն մէկուն ծայրը, լսեց մկան լացը. գլուխը վեր վերցուց և հարցուց.

— Ինչո՞ւ այդպէս կու լաս, աղա՛ մուկ։

Մուկը պատմեց գլխուն եկածը։

— Ա՞ռ է եղածը. մարդ Աստծու, ատոր համար ալ կու լա՞ն. ես քեզ կը տանեմ քու երկիրդ։ Կառնեմ թևերուս վրայ ու կը թռչինք միասին։

— Ըսածդ աղէկ, հեկեկաց մուկը, բայց դուն շատ բարձրէն կը թռչիս, կը վախնամ որ խելքս դառնայ ու վար իյնամ...

— Չէ՛, խաթերդ համար, շատ բարձրէն չեմ թռչիր, ըսաւ բազէն, խնդալով մուկին երկչոտութեան վրայ։

4

Մուկը կպաւ բազէին կռնակին ու ճամբայ ելան։

Քիչ մը որ թռան, մկան վախը ելաւ։

Բայց ահա, ատեն ատեն, մուկը կը սկսի հա՜ հա՜ հա՜, հի՜ հի՜ հի՜ խնդալ։

— Ի՞նչ կայ, մուկ բարեկամ, ինչո՞ւ այդպէս կը խնդաս, կը հարցնէ բազէն։

— Բան չի կայ. ալիքներուն պարելը որ կը

տեսնեմ, խնդուքս կը բռնէ, կը պատասխանէ մուկը։

Քիչ մը կերթան թէ չէ, մուկը նորէն կը սկսի քրքջալ։

Վերջապէս, կը մօտենան ցամաքին։

Բազէն կիջնէ գետինը և կռնակէն վար կը դնէ մուկը։

— Բայց, մուկ, կը հարցնէ նորէն բազէն, շիտակն ըսէ, ինչու այդքան կը խնդայիր ճամբան. ալիքներուն համար այդքան խնդուկ չէր ըլլար, ի՞նչ էր պատճառը։

— Շիտակը ըսե՞մ, կը պատասխանէ մուկը, մանր աչքերը խաղցնելով. երբ որ ճաղատ գըլխուդ կը նայէի՝ խնդուկս չէի կրնար բռնել...

— Այդպէս, հա՜, անիծած, կըսէ բազէն զայրացած. ես քեզի բարիք ընեմ, որ դուն իմ վրա՞ս խնդաս...

Եւ գետնէն փայտի կտոր մը կառնէ ու կը նետէ մկան։

Մուկը կը փախի, բայց փայտի կտորը իր վրայ կը մնայ։

Ահա, այդ օրէն ասդին է որ՝ մկան պոչը երկայն է։

Բազէն կուգայ մուկը ճանկելու

ՀԱՅ ԽՍՀ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ակադ. Ա. Մասիսյանի
Հ. Սողոմոնյանի անվան



ԿԱՐԻ ԿՈՂՈՎԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

1

Օր մը, մայրիկիս կարի կողովին մէջ, կռիւ կընէին մկրատը, ասեղը և դերձանը։

Դերձանը կըսէր մկրատին.

— Ի՜նչքան ծանր ես, մկրատ եղբայր. քու բեռիդ տակ կը տքամ ես. քիչ մը որ բարկանաս՝ սուր ակռայիդ տակ կառնես գիս ու կը ծամես։ Ո՛չ, դուն չար ես։

Ասեղը վեր թռաւ իր տեղէն, և բարակ ձայնով պոռաց.

— Շիտակ կըսէ իմ դերձան քուրիկս. դուն չար ես, մկրատ բարեկամ։ Մենք կը շինենք՝ դուն կը կտրես. մենք կը կարենք՝ դուն կը քակես...

Մատնոցն ալ խօսքի մէջ մտաւ և վէճը շատ մեծցաւ։

2

Մայրիկս վրայ եկաւ և ըսաւ անոնց.

—«Չէ, զաւակներս, պարապ տեղը կը վիճիք. պարապ տեղը զիրար չէք հասկնար։ Դուք բոլորդ ալ բարի էք, դուք աշխատանք կը կատարէք։

«Եթէ մկրատը չըլլար, ինչպէս շապիկ պիտի շինէինք, ինչպէս բաճկոն պիտի կարէինք, ինչպէս վերարկու պիտի պատրաստէինք։

«Մկրատը կը կտրէ, բայց լաւ բան կընէ։ Դուք բոլորդ ալ քոյր ու եղբայր էք իրարու։»

Կարի կողովին բնակիչները հասկցան իրենց սխալը, լռեցին և սկսան ուրախ-ուրախ աշխատիլ։

1. Տանտիկինը ա՛լ ինչ գործիքներ ունի տունը պէտքերուն համար։
2. Ինչ գործիքներ ունին կօշկակարը, երկրագործը, հիւսնը, որմնադիրը, երկրագործը։
3. Կա՞յ արհեստաւոր մը որ գործիք չունենայ. ինչո՞ւ։

ՁԱՏԻԿ

Վաղը կարմիր դատիկ է,
հազարէն մէկ հատիկ.
մեռնիմ նպոյ իր գալուն՝
որ կը բերէ մեզ գարուն։

Գոգը լեցուն կանաչ տերև,
հետն ալ ունի պայծառ արև.

մատաղ իրեն կոխած ոտքին՝
որ կը բանայ ծաղիկ չորս դին։

Եկուր, եկուր, մեր Ձատիկ ճան,
մենք ամէնքս քեզի զուրպան.
եկուր, հասիր մեր երթիքին,
վերջ տուր երկար այս մեծ պահքին։

Եկուր, բեր մեզ գառնուկ և ուլ,
կարմիր հաւկիթ՝ ծայրերը սուր.
գառնուկն առնենք դաշտը ելլենք,
ան խոտ ուտէ, հաւկիթն ալ մենք։

ԱՂՔԱՏ ՀԱՐՈՒՍՏԸ

1

Ժամանակին, կար ու չի կար, աղքատ մը կար։ Այս աղքատը, ամէն անգամ որ իրկունը իր չոր անկողինը մտնէր, կըսէր մտքէն.

— Ա՛խ, եթէ հարուստ ըլլայի, ես ալ լաւ կապրէի և ուրիշներուն ալ բարիք կընէի։

Եւ ժամերով չէր կրնար քնանալ. կը մրտմտար թէ ի՞նչպէս հարուստ ըլլայ ինք։

Օր մըն ալ երբ այսպէս կը մտածէր՝ յանկարծ, մութին մէջէն ձայն մը լսեց.

— Ահա քեզի քսակ մը։ Բայց, լսէ, հասարակ քսակ մը չէ ասիկա. մէջը ոսկի մը կայ. երբ այդ ոսկին առնես, տեղը իսկոյն ուրիշ ոսկի մը պիտի գտնես։ Ուզածիդ չափ առ, մի՛ վախնար։ Մի՛այն, տես, քսակը վերջէն գետը պէտք է ձգես. գետը չձգած՝ հինգ փարա անգամ պիտի չծախսես, եթէ ոչ՝ բոլոր ոսկիներդ փալասի կտոր կը դառնան...

Եւ, փա՛թ, աղքատին առջև քսակ մը ինկաւ։ Մարդը, ուրախութենէն, խենդի պէս ոտքի

ելաւ, առաւ քսակը, և հանեց մէջէն դեղին, կլորիկ, փայլուն ոսկի մը։ Հանեց թէ չէ, տեսաւ որ մէջը հատ մըն ալ կայ։

— Այս գիշեր, մինչև առտու, ոսկիները կը դիզեմ և կըլլամ հարուստ. յետոյ, քսակը կը տանիմ, գետը կը ձգեմ, և ուզածիս պէս երջանիկ կապրիմ,— ըսաւ մեր աղքատը։

2

Մինչև լոյս, քսակէն հանեց ոսկիները. դիզեց հա՜ դիզեց, և առտուն տեսաւ որ՝ իր սենեակին մէջ խոշոր կոյտ մը ոսկի ունի։

Ելաւ որ քսակը տանէ գետը նետէ։ Բայց, յանկարծ, միտքը փոխեց.

— Ինչո՞ւ այսքան շուտ տանիմ՝ գետը նետեմ... չէ՛, դարձեալ այսպէս կոյտ մը դիզեմ՝ անկէ ետքը։

Եւ ոկսաւ, արագ արագ, հանել ոսկիներն ու դիզել։

Եղաւ իրկուն, եղաւ գիշեր, ու աղքատը տակաւին կը հանէր ոսկիները քսակէն։ Գիշերը հազիւ երկու ժամ աչքը գոցեց. առտուան լոյսը ցաթելուն պէս՝ ցատկեց, ելաւ անկողնէն, և յաջորդ օրն ալ սկսաւ նորէն դիզել ոսկիները։

Այսպէս, անցան օրեր, շաբաթներ, ամիսներ, ամբողջ տարի մը։ Կերթար, ողորմութիւն կուգէր, չոր հաց կուտէր, ցնցոտիները չէր փոխեր և աղքատ կը մնար. ի՞նչու, որովհետև իր ոսկիներէն չէր կրնար օգտուիլ՝ քսակը գետին մէջ նետած չըլլալուն համար։

Հանգիստ չունէր՝ ոչ ցորեկը, ոչ գիշերը։ Տանը դռները ամուր կը գոցէր, որպէսզի չըլայ թէ գողը գայ, ոսկիները տանէ։ Դուրս ելածին պէս՝ գարձեալ շտապով տուն կը վազէր, կը նստէր չոր գետնին վրայ, և շարունակ կը դիզէր ոսկիները։

3

Վերջապէս, օր մը մտածեց.

— Էհ, ալ հերիք է. ինծի պէս հարուստ չի կայ այս աշխարհիս երեսը։ Երթամ, քսակը գետը նետեմ։

Տունէն դուրս ելաւ, և շիտակուեցաւ դէպի գետը։ Ճամբան, պինդ կը սեղմէր քսակը գրպանին մէջ. մատերը, յանկարծ, նորէն ոսկիին դպան, և իրեն այնպէս թուեցաւ թէ՝ այդ ոսկին մինչև հիմա իր հանածներէն ամէնէն ծանրն ու մեծարժէքն էր։

— Վերադառնամ տուն, այս մէկն ալ հանեմ, յետոյ վազն ի վազ տանեմ, քսակը ձգեմ գետը,— ըսաւ ինքն իրեն ու տուն դարձաւ։

Հանեց այդ մէկ ոսկին ալ, անկէ յետոյ միւսն ալ, երրորդն ալ. ու մնաց այդ օրն ալ տունը, յաջորդ օրն ալ, յաջորդ շաբաթն ալ...

Ագահը ծերացաւ, երեսը դեղնեցաւ իր ոսկիին պէս, բայց երբեք չբաժնուեցաւ իր մոգական քսակէն։

Ու այդպէս ալ մեռաւ. աղքատ իր ոսկիներուն մէջ, աղքատ խշտեակի մը վրայ, մուրացկանի հագուստով, քսակը պինդ բռնած ձեռքը։

ԱՒԵՏԻՍ ԿՈՒՏԱՆ

1

— Եկաւ, եկաւ, կերգէ խայտիտը։

— Ահա կու գայ, կը սուլէ կերնեխը։

— Մենք ենք որ կը բերենք, կը ճչան ծիծառները՝ իրենց սուր ձայնով. մենք նախակարապետն ենք անոր։

Ու բոլոր թռչունները, ցնծութեամբ կեղանակեն.

— Կեցցէ, կեցցէ գարունը։

Բայց, ժամանակ կորսնցնելու չի գար. պէտք է լաւ տեղ որոշել, շիւղ բերել, կաւ ը՛ն և բոյն շինել։

Շինել կամ երթիքին տակ, կամ կանաչներու մէջ, կամ ծառերու գագաթին վրայ։

— Սա թաւ մացառին տակ։

— Չէ, սա միւսը աւելի լաւ է։

— Հապա սա խոշոր կնճռին։

— Ո՛չ, այս ուռիին վրայ աւելի յարմար է։

2

Եւ թռչունները ձայն կու տան ամէն կողմէ. գիրար կը կանչեն՝ ծառէն ու թուփէն։ Կը ճռուողեն, կը վիճին, կը վիճին։ Դիւրին բան է տուն շինելը. պէտք է առաջէն աղէկ խորհիլ, ամէն յարմար ու անյարմար բան նախատեսել, որպէսզի ետքէն չզղջան։

Միայն, ծիծառներն են որ վարանում չունին. կը գտնեն իրենց հին բոյները, կը վերանորոգեն, նոր ցախ ու կաւ բերելով։

3

Բայց, թռչունները չեն միայն որ իրարանցումի մէջ են։

Միջատներն ալ կարտորան և կաշխատին։

Մրջիւնն ու մեղուն գործի վրայ են. մրջիւնը կեր կը կրէ, մեղուն հիւթ կը ժողվէ։

Բազմերանգ թիթեռները թևերնին արևուն տակ կը բանան, ու կը թառին մէկ խոտէն միւսը։

Ծղրիթներն ու ճպուռները կը ճրճռան։ Կայծոռիկները կը փայլին խոտին մէջ, կայծի պէս։

Ամէնքն ալ մեծ պատրաստութեան մէջ են՝ որ դիմաւորեն թանկագին ցիւրը։

4

Հապա ծաղիկները։ Անոնք ալ նախշուն լաթեր են հագեր և կը ժպտին։

Մանուշակը կը բանայ իր կապոյտ աչուկը։

Ճերմակ զատկածաղիկը կը պահուրտի կանաչ խոտերուն մէջ, և սպիտակ աստղի կը նմանի։

Ալրիմ-չապրիմները, իրենց դեղին կոճակով և ճերմակ թերթուկներով, կօրօրուին, կօրօրուին։

Հապա հրանունկները, այնպէս վեր կը տընկեն իրենց փայլուն գլուխները, որ կարծես մարգագետնին մէջ ցանուած ոսկիէ կոճակներ են։

Ու ծաղիկները միաբերան կըսեն.

— Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, աղուոր գարուն։ Դուն որ եկար՝ ձմեռը գնաց, ցուրտը դադրեցաւ. ալ հիմա չենք մսիր, ալ հիմա չենք դողար։ Արևուն տակ կը տաքնանք, սիւգին հետ կը խաղանք և կը ծծենք լոյսը։ Բարի եկար, հազար բարի եկար, կենսաբեր գարուն։

1. Ո՞վ է այն հիւրը որուն հատոր թռչունները կը պատան թէ «եկա՛ւ, եկա՛ւ»։

2. Գարնան առաջին օրերուն մէջ ինչ կընեն թռչունները, ինչ կընեն մրջիւնները, ինչ կընեն ծաղիկները։

ԴԱՇՏԱՅԻՆ ԻՐԻԿՈՒԱՆ ԵՐԳ

Լուսնակն անուշ,
հովն անուշ,
շինականին
քունն անուշ։

Ցաթեց լուսնակն
երկինքէն,
հովուի սրինգն էր
անուշ։

Հօտաղն եղներ
կարածէ,
մաճկալ պառկեր՝
քունն անուշ։

Մեղմիկ քամին կը փչէ,
ծովային հովն էր անուշ։

Դաշտեր, ձորեր մընչեր են,
գլգան ջրերու ձայնն անուշ։

Հաւեր թրռան իրենց բոյն,
սոխակին տաղն էր անուշ։

Անմահական հոտ կու տայ
քեաֆուր վարդին հոտն անուշ։

ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼԸ

1

Գիշերը անձրև կուգար, բայց ահա գարնան պայծառ առտուն կը լուսնայ։

Խոտերը լուացուեր, մաքրուեր են դաշտին մէջ. երկինքը կապոյտ է, վրան ամպի փոշի մը անգամ չի կայ։

Ճամբաները կը չորնան ու արտերուն նոր-ածիլ կանաչները կը պսպղան արևին տակ։

Առու մը կը հոսի դաշտին մէջէն՝ գլգալով գլգալով, և իր եզերքը մանուշակ մը կօրօրուի։

Մանուշակին մէկ թերթիկէն կախուած է անձրևի կաթիլ մը՝ աղամանդի պէս յստակ։

Կօրօրուի կաթիլն ու կըսէ կապոյտ ծաղիկին.

— Սիրուն ծաղիկ, մի՛ օրօրեր գլուխդ, մի՛ բանար թարթիչներդ, քիչ մըն ալ սպասէ. ես յոգնած եմ, թող որ քիչ մը հանգիստ առնեմ ու ճամբան շարունակեմ։ Կուզեմ որ քիչ մը հանգչիմ քու փափուկ պսակիդ վրայ։

— Շատ լաւ, ազնիւ եղբայր, կըսէ մանուշակը։ Բայց ուրկէ կու գաս որ այդքան յոգնած ես. ուր կերթաս այդպէս աճապարանքով։

2

Անձրևին կաթիլը քիչ մը կը մտմտայ ու կըսէ.

— Ասկէ շատ շատ առաջ, ես կաթիլ մըն էի՝ այն կաթիլներուն պէս, որ կը գտնուին լիճին ուրերուն մէջ։ Այդ լիճէն, ամէն օր, կաթիլները

կը շոգիանան ու երկինք կելլեն։ Կարգը եկաւ ինծի։ Ես ալ իմ ընկերներուս հետ բարձրացայ. բարձրացայ ու հովը քշեց զիս հեռու երկիրներ։ Ընկերներէս շատերը միացան իրարու, եղան խոշոր ամպեր և գացին դէպի ուրիշ աշխարհներ։

«Ես դեռ երկինքին մէջ էի, տեսայ որ առուներէն, գետերէն, լիճերէն ու ծովերէն եկան հազարաւոր ուրիշ կաթիլներ ալ ու ինծի միացան։

«Մենք խոշորցանք, եղանք հսկայ ամպեր և ծածկեցինք երկինքին երեսը։ Այս գիշեր անձրև դարձանք և վար իջանք. վար իջանք որ ջրենք բոյսերը և առատցնենք աղբիւրները։

— Ո՞ւր պիտի երթաս ուրեմն դուն հիմա, հարցուց մանուշակը դարձեալ։

— Հիմա ես պիտի կաթիմ գետինը, պիտի մտնեմ հողին տակ, և պիտի ջրեմ քու արմատներդ, ազուոր ծաղիկ։

Լռեց կաթիլը, անգամ մը ևս ալ օրօրուեցաւ, ճնաս բարով ըսաւ և, ակնթարթի մը մէջ, անհետացաւ։

Մանուշակը իր թերթերը բացաւ և բարև տուաւ արեգակին տաքուկ ճառագայթներուն։

1. Ինչպէս կը կազմուին ամպերը. Ինչ պատմեց կաթիլը։

ԱՐԱԳԻԼ

Ա՛յ արագիլ,
բարով եկար,
դուն արագիլ,
բարով եկար.
մեզի գարնան
նշան բերիր,
մեր սրտիկը
զբուարթ ըրիր։

Ա՛յ արագիլ,
մեզի իջիր,
դուն արագիլ,
մեր տունն իջիր,
մեր ծառին քու
բոյնիկդ դիր,
վա՛յ մեր սիրուն
դուն արագիլ։

Ա՛խ արագիլ, քեզ գանգատիմ,
ա՛յ արագիլ, քեզ գանգատիմ.
ես իմ բոլոր ցաւերս ըսեմ,
սրտիս ցաւեր, հազար ցաւեր։

Մեր արագիլ, երբ դուն գացիր,
դուն մեր ծառէն երբ որ գացիր,
սաստիկ հովեր ցուրտ փըչեցին՝
ծաղիկներըս իմ չորցուցին։



Պայծառ երկինքն էր մըթընտեր,
պայծառ արևն էր խաւարեր.
ճերմակ ձմեռն ելեր եկեր՝
մեր վրայ ձիւն, ձիւն կը բերդէր։

Վարագայ մեծ սարէն բրռնած,
մեր Վարագայ սարէն բրռնած,
ձիւնն էր իջեր, հողն էր ծածկեր,
կանաչ դաշտը քուն էր մրտեր։

Ա՛յ արագիլ, բարով եկար,
դուն արագիլ, բարով եկար.
մեզի գարնան նշան բերիր,
մեր սրտին դուն արև բերիր։

ԹԱՂԱՐԻՍ ՄԷՋ

Թաղարիս մէջ գետնախնձոր մը տնկեցի։

Հիմա պիտի ելլէք վրաս խնդաք թէ՝ թաղարին մէջ ալ մարդ գետնախնձոր կը տնկէ՞. թաղարին մէջ, շատ շատ ծաղիկ կը ցանուի։

Է՛հ, եթէ կուզէք՝ խնդացէք. բայց գիտցէք որ գետնախնձորն ալ սիրուն բոյս է և ժամանակին, թագաւորին մէկը՝ իր լամբարին մէջ անոր ծաղիկները կանցնէր։

Տնկած բոյսս աճեցաւ, և աշնան, թաղարիս մէջէն տասներկու հատ խոշոր գետնախնձոր հանեցի։

Հողը չպարպեցի թաղարին մէջէն, և միւս տարին, նորէն գետնախնձոր մը տնկեցի անոր մէջ։ Բայց, այս անգամ, տունկս չաճեցաւ, դեղնեցաւ և վերջը վերջը չորցաւ։

Ինչո՞ւ այդպէս եղաւ։

Պիտի ըսէք որ հողը ալ սնունդ չունէր իր մէջ. շատ լաւ, բայց ճիշտ նոյն հողին մէջ ցորեն ցանեցի, և ցորենները լաւ աճեցան ու քիստեր կապեցին։

Նոյն հողը որ գետնախնձորիս համար սնունդ չտուաւ, ընդհակառակը, ցորենիս համար տուաւ։

Ես ալ ասոր պատճառը չէի գիտեր։ Գացի, փորձառու հողագործի մը հարցուցի։

Հողագործը պատասխանեց ինծի.

— «Հողին մէջ երբ միշտ նոյն բոյսը ցանես, շուտով կը յոգնի և ալ սնունդ չի տար. ասոր համար, պէտք չէ որ նոյն հողին մէջ, վերայէ վրայ, միևնոյն բոյսը ցանուի։

Խելացի հողագործները արտի մը մէջ երբ ցորեն ցանած են, յետոյ գետնախնձոր կը տընկեն, յետոյ վարսակ կամ գարի կը ցանեն»։

Գիտէ՞ք այս բանը։ Գոնէ ես չէի գիտեր։

ԺԱՆՏԱԽՏԸ

1

Գազաններուն մէջ ժանտախտ էր,
չի մեռնիլը շատ մեծ բախտ էր։
Ճրգնաժամ էր օրհասական,
ուստի պոռաց Առիւծ արքան.
— «Կենդանիներ ինչքան որ կան,
«թող հաւաքուին, գահիս մօտ գան.
«ըսենք, խօսինք, զիրար լսենք,
«Ցարդերուեցանք, ճար մը գտնենք»։

Է՛, արքայի հրաման էր,
ժանտախտի պէս բան մ՚ալ ան էր։

սարսուռ ինկաւ դաշտ ու անտառ,
կենդանիներ լեռապատառ
եւ շընչասպառ ու վազնէվազ,
մեծ ու փոքր, բազմատարազ՝
արջ ու յովազ, վագր ու վարազ,
չար բորենի, աղուէս ու գայլ,
մեր էշն անգամ վրսեմափայլ
եկան կեցան առիւծին դէմ։

2

Արքան գոչեց. «Ես ձեզ հետ եմ,
«մեծ իշխաններ, ես լաւ գիտեմ
«որ ձեր սրրտէն արիւն կերթայ։
«Եթէ բանը այսպէս մընայ,
«այս ժանտախտին ականջը խուլ,
«ամբողջ ցեղով մենք կերթանք կուլ։
«Եղբայրներս լուռ ու տրրտում,
«Ո՞ր մեղքն է որ այս ցասում
«Տէրն է ճամբեր մեր խեղճ ցեղին,

«մեղաւորին թէ անմեղին։
«Աշխարհք բըռնեց ցեղիս լացը,
«մէկտեղ կայրին չորն ու թացը։
«Եկէք, խնդրեմ, անկեղծօրէն
«խոստովանինք, ինչ անօրէն
«բան ենք բըռներ, մեծ մեղք գործեր
«որ վերն Աստուած է բարկացեր։
«Հէնց ես որ ձեր գըլխաւորն եմ,
«ձեր ամէնէն մեղաւորն եմ.
«քանի՞ անմեղ գառ ու ոչխար
«ուղարկեր եմ իմ մութ աշխարհ,
«եւ հովիւն ալ լեղապատառ
«դեռ ըրած եմ երկու պատառ։
«Ա՛ս իմ մեղքս է, չեմ ծածկեր ես,
«որ բերեր է ցասում այսպէս»։



3

Մեղքերն ըսին արջ ու յովազ,
Զար բորենին, վագր ու վարազ,
եւ շուն ու գայլ
ու այլ և այլ։

Վերջն ալ էշը վըսեմափայլ
ըսաւ. «Ա՛ս է իմ մէկ մեղքս.
«արտին մօտէն անցած տեղս,
«աչքս ելլէր, ա՜խ, այն տարին
«զարկի բերան մը գարիին»։

Մեր աղուէսը լըսեց, լըսեց,
մէյ մ՚ալ յանկարծ տեղէն ցատկեց,
ձև մը առաւ այնպէս արդար,
ու ճառ մ՚ըսաւ այնպէս ճարտար՝
որ յիշուելով միշտ անդադար
պիտի յիշուի ան դարէ դար.
— «Տեսէք, ըսաւ, Սուլթան ու Խան,
«ես ձեր յետին, խոնարհ ծառան,
«ես ամէնէն մեղաւոր եմ,
«արքայութիւնն ինձ որոնեմ։

«Մեր արքան վէս,
«մեր արքան հեզ,
«յայտնեց բոլոր մեղքերը մեզ.
«սակայն, խղճով եկէք դատենք,
«մեղքը վարձքէն խելքով դատենք։

«Ըլլա՛յ արքայ,
«սովածն ման գայ,
«չուտէ՞ ոչխար.
«փրկի՛ր, աշխարհ...
«ո՛չ, մեծ արքայ,
«ինչ ոչխար կայ՝

«Տէրն է տրուեր քեզ վայ-բաժին.
«ես ի՞նչ ըսեմ այս ախմախին,
«այս անտաշին,
«կոպիտ էշին
«որ արտն ուտէ անցած ատեն
«ու չը զատէ մեղքը վարձքէն՝
«բերելով մեր ցեղին գլխուն
«ցաւ, պատուհաս ու կարմիր ձիւն։
«Զէ, պէտք է էշն իր յանցանքին
«պատիժն առնէ կըրկին կըրկին»։

Գաղանները ոտքի ելան,
յարձակեցան իշուն վրան՝
տուր որ կու տաս, մէջքին կողին,
անոր լաւ ծեծ մը քաշեցին,
կերած գարին
քթէն բերին։

1. Պատմեցէք այս պատմութիւնը։
2. Ինչո՞ւ բոլոր յանցանքը իշուն վրայ ձգեցին։
3. Մինակ է՞շն էր յանցաւորը։
4. Համեմատեցէք էշն ու աղուէսը իրարու հետ։

ՄՐՋԻՒՆՆԵՐՈՒՆ ԲՈՅՆԸ

Նայեցէք, նայեցէք. կերթան, կու գան, նորէն կանցնին, նորէն կը դառնան. մրջիւնները, մրջիւնները։

Մէկը ցորենի հատիկ մը կը քաշէ ետևէն, ուրիշ մը փշրանք մը շալկեր է. սա միւսն ալ իրմէ երկու անգամ խոշոր շիւղի մը լծուեր է։

Այդ բոլորը կը կրեն դէպի բոյնը։

Ահա իրենց բոյնն ալ, որ ծակեր են պատին տակ. կը մտնեն, կելլեն հարիւրներով, և շարոց-շարոց կերթան՝ բարիք բերելու անդուլ, անդադար։

Մրջիւններն ալ մեղուներուն պէս են։ Կապրին միասին՝ հարիւրներով ու հազարներով։ Մէկտեղ կը շինեն իրենց բոյնը, մէկտեղ կաշխատին և մէկտեղ կը պահեն իրենց կեանքը։

Ոմանք ուտելիք բերելու կերթան. ուրիշներ բոյնին մէջ կը կենան և հաւկիթներուն խնամք կը տանեն, որպէսզի նոր ձագեր ելլեն։

Ունին կարգ կանոն, և ամէնքն ալ կը հնազանդին իրենց դրած օրէնքներուն։ Գիտեն թէ,

առանց կարգ ու կանոնի, չեն կրնար ոչ իրարու օգնել, ոչ ալ՝ միասին ապրիլ։

Մեղուներուն և մրջիւններուն պէս աշխատասէր կենդանի քիչ կայ։

Շատեր կըսեն թէ մրջիւնները պարէն կը հաւաքեն, որ ձմեռը ուտեն։

Սխալ է այս կարծիքը։

Մրջիւնները կը թմրին, կը քնանան բոլոր ձմեռը, հետևաբար բան չեն կրնար ուտել։

Մրջիւնները լեզու չունին, բայց իրարու հետ կրնան խօսիլ։ Իրենց բողկուկները իրարու կը քսեն, և, այդպէս, իրենց միտքը մէկմէկու կը հասկցնեն։

Մեր երկրին մրջիւնները փոքր են. բայց տաք երկիրներու, օրինակի համար Ափրիկէի մէջ, կան շատ խոշորները։

Տեսակ մը մրջիւն ալ կայ, որ թունաւոր է. վայրենիները կը բռնեն այդ մրջիւնը, կը չորցընեն, փոշի կընեն և իրենց նետերուն ծայրը կը քսեն. երբ այդ նետով մէկը վիրաւորեն, այլևս չազատիր ու կը մեռնի։

1. Մրջիւնի բոյն տեսա՞ծ է։
2. Մրջիւնները իրարու հետ ինչպէ՞ս կը խօսին։

ԵՐԿՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ

1

Տիգրան Վարդանեան հպարտ է, որովհետև իր հայրը վաճառական է։ Իր հօրը անունն է Վարդան էֆէնտի։

Վարդան էֆէնտի գեղեցիկ, մաքուր զգեստներ կը հագնի, ճերմակ օձիք կը դնէ և մետաքսէ փողկապ կը կապէ։

Տիգրանին ընկերն է Մարտիրոսը։

Մարտիրոսին հայրը գեղեցիկ լաթեր չի հագնիր և մետաքսէ փողկապ չի դներ. անոր ձեռքերը միշտ սև են։

Մարտիրոսին հայրը երկաթագործ է։

Տիգրան, անցած օր, վէճ ունեցաւ Մարտիրոսին հետ, և բարկանալով պոռաց անոր երեսին.

— «Քու հայրդ անօթիին մէկն է»։

2

Մարտիրոսին սիրտը շատ ցաւեցաւ. աչքերուն մէջ արցունքներ լեցուեցան, բայց զսպեց ինքզինք և չի նախատեց իր ընկերը։

Երբ իրկուն եղաւ, Մարտիրոս, լալով, իր հայրիկին զանգատեցաւ Տիգրանին ըսածը։

Միւս օր, Մարտիրոսին հայրը, իր տղուն հետ, ուսուցչին քով եկաւ, և զանգատեցաւ Տիգրան Վարդանեանի վրայ։

Այն ատեն, Տիգրանին հայրն ալ, դպրոց կը բերէր իր տղան։ Լսեց որ երկաթագործը իր անունը կու տար՝ ուսուցչին հետ խօսելով։ Մօտեցաւ անոնց և հարցուց թէ ինչ է պատահեր։

— Գիտէ՞ք, Վարդան էֆէնտի, այս արհեստաւորը եկած է զանգատելու Տիգրանին վրայ. Տիգրանը անոր տղուն ըսած է թէ «քու հայրդ անօթիին մէկն է»։

3

Վարդան էֆէնտի յօնքերը կախեց և հարցուց Տիգրանին.

— Ճի՞շտ է որ այդպիսի խօսք մը ըսիր։

Տիգրան գետինը կը նայէր և չէր պատասխաներ։

Այն ատեն, հայրը բռնեց անոր թևէն, քաշեց Մարտիրոսին քով և ըսաւ.

— Ներողութիւն խնդրէ Մարտիրոսէն։

Երկաթագործը ուզեց որ Վարդան էֆէնտին ներէ Տիգրանին. բայց Վարդան էֆէնտին ըսաւ, «ոչ, ոչ, թողէք», և դարձեալ հրամայեց իր տղուն.

— Ներողութիւն խնդրէ։ Կրկնէ այսպէս,— «Ներողութիւն կը խնդրեմ, Մարտիրոս, իմ ըսած անվայել խօսքիս համար. քու հայրդ այնքան ազնիւ մէկն է՝ որ իմ հայրիկս պատիւ կը սեպէ անոր ձեռքը սեղմել»։

Տիգրան՝ ամօթահար, կրկնեց իր հօրը ըսած խօսքերը ցած ձայնով.

— Ներողութիւն կը խնդրեմ, Մարտիրոս... իմ ըսած... անվայել... խօսքիս համար... քու հայրդ այնքան ազնիւ մէկն է... որ իմ հայրիկս... պատիւ կը սեպէ... անոր ձեռքը սեղմել...

Այն ատեն, Վարդան էֆէնտի բռնեց երկաթագործին խոշոր ձեռքը և սեղմեց։

— Կը խնդրեմ,— Վարդան էֆէնտին ըսաւ ուսուցչին, Տիգրանը ասկէ ետք նստեցուցէք Մարտիրոսին հետ՝ մէկ գրասեղանի վրայ։

Ուսուցիչը նստեցուց Տիգրանն ու Մարտիրոսը մէկ գրասեղանի վրայ։

Վարդան էֆէնտի մնաս բարով ըսաւ և մեկնեցաւ։

Երկաթագործը կեցաւ տակաւին մէկ քանի վայրկեան. տեսաւ թէ ինչպէս երկու մանուկները նստեցան քով քովի, մոռցան ամէն բան և սրտով երկու եղբայրներ եղան։

Յետոյ, մօտեցաւ Տիգրանին և իր խոշոր, հաստ ձեռքերովը շոյեց անոր գլուխը, ու ինք ալ մեկնեցաւ։

Կը խնդրենք ուսուցիչէն ընդլայնել այս դասը խօսակցութեամբ և տպաւորել դասին ոգին տղոց մտքին մէջ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՂԲԱՅՐԸ

Եկուր, երթանք, իմ եղ ճան,
համ վար ընենք, համ ալ ցան.
աշխատանքի օրերը
ահա եկան, մօտեցան։

Գութանը դուն կը քաշես
ու մանկալդ ալ կըլլամ ես.
ամառ, աշուն թէ ձմեռ,
այս աւօրն է պահեր մեզ։

Եկուր, երթանք, վար ընենք,
համ վար ընենք, համ ցանենք,
առատ քրքտինք թափելով
մեր ցաւերուն ճար ընենք։

Դուն լաւ գիտես թէ, եղ ճան,
ոչ խոտ ունիս, ոչ դարման,
ոչ ալ մեր տան քիւլֆէթը
չոր հաց ունի առտուան։

Ամբարները դատարկ են,
ոչ գարի կայ, ոչ ցորեն.
քաշելով մեծ նեղութիւն,
պահեր եմ այս սերմնցուն։

Եկուր, երթանք, ապրար ճան,
համ վար ընենք, համ ալ ցան.
պարապ-սարապ կենալէն
ձեռքս ու ոտքս թուլացան։

ԵՂՍԱ ՄՕՐՔՈՅՐԻՆ ԼԱՊՏԵՐԸ

1

Եղսա մօրքոյր միայակ էր մնացեր աշխարհին մէջ։ Ունէր չունէր, աղքատիկ տնակ մը ունէր։

Գիշեր մը, քամին կոռնար և ալիքները կը բաղխուէին մօտակայ ժայռերուն. Եղսա մօրքոյր իր իլը կը դարձնէր և կը խորհէր.

— Մէկը չունիմ որ իմ վրաս մտածէ. մէկը չի կայ՝ որուն վրայ ես մտածեմ... վայ մենաւորին գլխուն։

Եւ ահա, նորէն լսեց ալիքներուն աղմուկը։

— Տէր Աստուած, մտածեց Եղսա մօրքոյր, հիմա քանի՞ քանի՞ նաւեր պիտի խորտակուին մեր առնէն քիչ մը անդին, ծովուն մէջ։ Եթէ փարոս մը ըլլար այս գիւղին մէջ՝ միշտ լոյս կու տար նաւերուն և կը փրկէր կանոնք վտանգներէ...։

2

Ինչ լաւ բան պիտի ըլլար, եթէ Եղսա մօրքոյր ամէն գիշեր լապտեր մը վառէր, իր պատուհանին մէջ դնէր, և լոյս տար նաւորդներուն։

Ճրագը շատ աղէկ, բայց Եղսա մօրքոյր աղքատ է, ուրկէ գտնէ լապտերի դրամ, ուրկէ գտնէ աւելորդ քարիւղի դրամ։

Մտածեց, տեսաւ որ, եթէ ամէն գիշեր ժամ մը աւելի աշխատի՝ թէ լապտերը պիտի գնէ, թէ ամէն օրուան քարիւղը։

Աշխատեցաւ, այսպէս, շաբաթ մը և գնեց լապտերը. վառեց զայն և դրաւ իր պատուհանին մէջ։

Անկէ ետք, ամէն գիշեր, կը մթնէր թէ չէ, Եղսա մօրքոյրին տնակէն կը պլպլար լոյսը. կը պլպլար և ճամբայ ցոյց կու տար նաւորդներուն։

3

— Որո՞ւ համար կը վառես այդ լապտերդ, Եղսա՛ մօրքոյր, կը հարցնէին գեղացիները. ո՞վ ունիս որ պիտի գայ...

Եւ Եղսա մօրքոյր, բարի ժպիտով, ցոյց կու տար լայնարձակ ծովը, ու կըսէր.

— Լոյս կու տամ իմ եղբայրներուս, իմ գաւակներուս...

Եւ իրաւ, երբ մրրիկը կը ծառացնէր ալիքները և նաւը կը հանէր մէկ վեր ու կը ձգէր մէկ վար, նաւուղիղը կը տեսնէր հեռուն պլպլացող լոյսը, և կը պոռար նաւաստիներուն.

— Նայեցէք հեռուն, Եղսա մօրքոյրին ճրագը կը վառի. զգոյշ, այս տեղ ժայռեր կան...

4

Շատ տարիներ վառեցաւ Եղսա մօրքոյրին լապտերը այն տեղ։

Բայց Եղսա մօրքոյր կը ծերանար. օրէ օր աւելի կը ծռէր անոր մէջքը, աւելի ու աւելի վար կը կախուէր անոր ճերմկած գլուխը. կը դողային չորցած ձեռքերը, բայց լապտերը կը վառէր միշտ ու շարունակ լոյս կուտար։

Գեղացիները երբ առտու մը արթնցան, տեսան որ Եղսա մօրքոյր մեռեր է։ Գեղ մը գեղով հաւաքուեցան ու թաղեցին զինք։

Երբ հողը լեցուցին անոր վրայ և գերեզմանը քարով ծածկուեցաւ, քահանան ըսաւ.

— Մնա՛ս բարով, Եղսա՛ մօրքոյր. բայց, ա՛լ ո՞վ պիտի վառէ քու լապտերդ, ա՛լ որո՞ւն ճրագը լոյս պիտի տայ նաւորդներու ճամբուն։

Այն ատեն, գեղացիները պոռացին.

— Մե՛ր, տէր-հայր, մեր ճրագը։

5

Մինչև այսօր ալ, այն գիւղին մէջ, մէկ բլուրին գագաթին վրայ՝ կը վառի լապտերը, Եղսա մօրքոյրին լապտերը, և կը լուսաւորէ խաւարը։

Մինչև այսօր ալ նաւորդը հեռուէն տեսնելով լապտերին լոյսը՝ կը կանչէ.

— Տեսէ՛ք, Եղսա մօրքոյրին ճրագը կը վառի հոն. զգո՛յշ, ժայռեր կան այստեղ։

1. Որո՞ւ համար է որ Եղսա մօրքոյրը կ'ըսէր. «լոյս կու տամ իմ եղբայրներուս, իմ զաւակներուս». չէ՞ որ ինք ոչ եղբայր ունէր, ոչ զաւակ։

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

1. Ամառը գնաց 5
2. Մարդը ի՞նչ շինեց. . . . 6
3. Մամային ցորենը 7
4. Հըմմա կերանք 9
5. Ջուրին երգը 10
6. Տունը ո՞վ կը շինէ. . . . 11
7. Սկիւռը 14
8. Ջաղաց 15
9. Ի՞նչ ըսաւ, ի՞նչ լսեց . . . 17
10. Մայրիկս առողջացաւ. . . 17
11. Գեղացին ու լուսայափոխը . 19
12. Փեսացու մուկը. 20
13. Էշը 21
14. Վա՛ղը, վա՛ղը 23
15. Ողնին. 25
16. Աղբիւրը. 27
17. Լսէ՛, պղտիկ աղջիկ . . . 28
18. Մեր սև կատուն 30
19. Ձին ու քուռակը 31
20. Ծուռ-դդումը 33
21. Անմեղներու կոտորածը . . 36
22. Աղը 38
23. Թութակը 40
24. Զարմանալի կենդանին . . 43
25. Կապիկին արձանը 45
26. Ճայեկն ու տատրակը . . . 47
27. Կորսուած զմելին 48
28. Հրաշալի հատիկը 50
29. Ձին 53
30. Մկան մահը. 56
31. Ոսկիին կարասը 61
32. Քամին ու մարդը . . . 64
33. Ո՞վ կը շինէ մեղրը . . . 65
34. Այո և Ոչ 66
35. Կայրերու կարծիքը . . . 68
36. Կաղանդին օրը 70
37. Ցորենի հատիկը 72
38. Ի՞նչ կայ, ի՞նչ կայ . . . 75
39. Հեղեղը 81
40. Մանուկն ու ջուրը . . . 82
41. Առաջին ձիւնծաղիկները . 83
42. Ձուկերը և թռչունները . 85
43. Հայրենական տուն . . . 87
44. Աշկերտ Մարտիրոս . . . 89
45. Ածուխ, հանքածուխ . . 90
46. Դարուն 92
47. Մուկը, ճայեկը և բազէն . 93
48. Կարի կողովին բնակիչները 97
49. Ջատիկ 98
50. Աղքատ հարուստը . . . 100
51. Աւետիս կուտան 103
52. Դիշատային իրիկուան երգ . 106
53. Անձրեւի կաթիլը 107
54. Արագիլ 109
55. Թաղարիս մէջ. 110
56. Ժանտախտը 112
57. Մրջիւններուն բոյնը. . . 117
58. Երկու Մանուկներ . . . 119
59. Աշխատանքի եղբայրը . . 122
60. Եղսա մնաքոյրին լապտերը 124

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՈՐ-Арм ССР
Ա. Հայ 1 Масниева

2013 3604-3607

<< Ազգային գրադարան
NL0059764

<< Ազգային գրադարան
NL0059763

<< Ազգային գրադարան
NL0059762

<< Ազգային գրադարան
NL0059761

10 - 50

02 - 0